



ISSN 1829-4219

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ  
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

№ 93 2016



- ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ
- ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ՏԵՂԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՆԻԿՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԻՆ
- ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ
- ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՈՒՂՂՈՒՄԸ ՊԱՏԺԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ



## Հիմնադիր և հրատարակիչ՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## № 93 2016

ՀՀ ԳՐԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Էմիլ Բաբայան** ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ավագ դասախոս, (խորհրդի նախագահ)

**Աշոտ Եսայան** ՀՀ գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ, (գլխավոր խմբագիր)

**Դավիթ Մելքոնյան** ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

**Միեր Հակոբյան** ՀՀ գլխավոր դատախազության միջազգային համագործակցության և իրավական ապահովման վարչության դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

**Գևորգ Դանիելյան** ՀՀ սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Վահրամ Շահինյան** ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ. իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

**Հովհաննես Սարգսյան** ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Գառնիկ Սաֆարյան** ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Արման Թաթոյան** ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Ռուբեն Մելիքյան** ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

### Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.  
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5  
Հեռախոս՝ 511-589, ֆաքս՝ 585-152  
Էլ. հասցե՝ orinaknutyun@prosecutor.am  
www.prosecutor.am  
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 27.06.2016թ.  
Ֆորմատ՝ 60x84 1/8  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 4 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»  
հրատարակչության տպարանում  
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2016թ.

# ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

«Նախագահի հրամանագրեր» ..... 3

## ԿՈՒԵԳԻԱՅԻ ՆԻՍՏ

«Վախճանի դատախազը ներկայացրեց նորանշանակ տեղակալներին» ..... 4

## ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

«Վախճանի դատախազն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանին ... 4

«Վախճանի դատախազն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության արդարադատության նախարարին . 5

Քննարկում «Վախճանի դատախազությունում» ..... 6

«Վախճանի դատախազի տեղակալն ընդունել է ԵԽԽՎ մոնիթորինգի հանձնաժողովի ղեկուցողներին ..... 7

## ԽՐԱԿՆՈՒՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

«Վախճանի դատախազի հրամաններով» ..... 8

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արամ Վարդանյան Սահմանադրականության կապը պետության կառավարման համակարգի հետ ..... 9

## ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Պետրոս Մարտիրոսյան Դատապարտյալի ուղղումը պատժի նպատակների համակարգում ..... 15

Արայիկ Ասլանյան Բնակարան, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով իրականացված

հափշտակությունների քրեաիրավական որակման որոշակի առանձնահատկությունները ..... 24

Лусине Варданян Эвтанизия как правовая категория ..... 31

## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տիգրան Ղազարյան Որոշ նկատառումներ «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» օպերատիվ

հետախուզական միջոցառման իրականացման իրավաչափության վերաբերյալ ..... 39

## ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Կարինե Պետրոսյան Ֆիզիկական անձանց սնանկության առանձնահատկությունները ..... 45

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հայկ Կեսոյան Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ժամանակակից ընկալումները .. 49

## ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts ..... 56

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Վախճանի դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում

տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները ..... 64



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ  
Դ. ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ՏԵՂԱԿԱԼ  
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետով և հիմք ընդունելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը՝ ո թ ո շ ու մ ե մ.

Դավիթ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2016թ. Հունիսի 8  
Երևան  
ՆՀ-461-Ա



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ  
Ա. ԴԱՎԹՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ՏԵՂԱԿԱԼ  
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետով և հիմք ընդունելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը՝ ո թ ո շ ու մ ե մ.

Արթուր ԴԱՎԹՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՍԱՐԳՍՅԱՆ

2016թ. Հունիսի 22  
Երևան  
ՆՀ-476-Ա

## ՀՀ զԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԸ ՆԵՐԿԱՅԱՅՐԵՅՆՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՏԵՂԱԿԱՆՆԵՐԻՆ



ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը ՀՀ դատախազության կոլեգիայի անդամներին է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազի նորանշանակ տեղակալներ **Դավիթ Մելքոնյանին** և **Արթուր Դավթյանին**:  
Գլխավոր դատախազը բարձր է գնահատել նրանց պրոֆեսիոնալիզմը և իրավական համակարգում երկարամյա աշխատանքային փորձը՝ վստահություն հայտնելով, որ դատախազական համակարգում նրանց գործունեությունն ուղղված կլինի ՀՀ իրավական համակարգի ամրապնդմանը:

տել նրանց պրոֆեսիոնալիզմը և իրավական համակարգում երկարամյա աշխատանքային փորձը՝ վստահություն հայտնելով, որ դատախազական համակարգում նրանց գործունեությունն ուղղված կլինի ՀՀ իրավական համակարգի ամրապնդմանը:

## ՀՀ զԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆԻՆ

ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանն ընդունել է ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադին:

Հանդիպման ընթացքում կողմերը, ընդգծելով երկու երկրների միջև տնտեսական, մշակութային և մի շարք այլ ոլորտներում առկա համագործակցության բարձր մակարդակը, կարևորել են իրավական ոլորտում առավել արդյունավետ համագործակցության անհրաժեշտությունը: Մասնավորապես քննարկվել են, հանցագործություն կատարելու դեպքում ԻԻՀ քաղաքացիներին Հայաստանի Հանրապետությունում և ՀՀ քաղաքացիներին՝ Իրանի Իսլամական Հանրապետությունում պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարցեր:

ՀՀ-ում ԻԻՀ դեսպանն առաձնացրել է Հայաստան այցելող Իրանի քաղաքացիների կողմից ՀՀ օրենսդրության չիմացության արդյուն-



● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

քում առաջացող խնդիրները, նշելով, որ նույնաբովանդակ խնդիրներ առաջանում են նաև Իրան այցելող ՀՀ քաղաքացիների համար: ՀՀ գլխավոր դատախազն ընդգծել է, հաշվի առնելով երկու երկրների օրենսդրությունների տարբերությունները, անհրաժեշտ է մշակել երկկողմ իրավական փոխօգնության հստակ, դետալային և մատչելի մեխանիզմ, ինչը իրավական պաշտպանության ճիշտ կազմակերպման հնարավորություն կտա ինչպես ԻԻՀ-ում ՀՀ քաղաքացիների, այնպես էլ ՀՀ-ում ԻԻՀ քաղաքացիների համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ

պայքարին առնչվող խնդիրները: Երկուստեք նշվել է, որ այս ուղղությամբ իրավապահ մարմինները խիստ և հետևողական աշխատանք են իրականացնում: Քննարկվել է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա՝ առավել արդյունավետ համագործակցության ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազի հրամանով ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան **Սեյեդ Քազեմ Սաջադին** պարգևատրվել է **հուշանվերով**:

## ՀՀ ԳԼՒՍԱՎՈՐ ԴԱՏԱՒԱԶՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության արդարադատության նախարար Մոստաֆա Փուրմոհամադիին: Հանդիպմանը մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազի տե-



ղակալ Է. Բաբայանը, ՀՀ գլխավոր դատախազության Միջազգային իրավական կապերի բաժնի պետ Ե. Ավագյանը, ԻԻՀ արդարադատության նախարարության արտաքին կապերի վարչության պետ Մոհամմադ Ալի Մեհրան Ֆարը, ԻԻՀ արդարադատության նախարարի

խորհրդական Ահմադ Ալի Մոհսեն Ջադեն, ՀՀ-ում ԻԻՀ դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադին, ԻԻՀ դեսպանության խորհրդական Ալի Նասեր Սոբհանի Փուրը:

Հանդիպման ընթացքում կողմերը, ընդգծելով երկու երկրների միջև տնտեսական, մշակութային և մի շարք այլ ոլորտներում առկա համագործակցության բարձր մակարդակը, կարևորել են իրավական ոլորտում առավել արդյունավետ համագործակցության անհրաժեշտությունը: Մասնավորապես, քննարկվել են հանցագործություն կատարելու դեպքում ԻԻՀ քաղաքացիներին Հայաստանի Հանրապետությունում և ՀՀ քաղաքացիներին՝ Իրանի Իսլամական Հանրապետությունում պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարցեր:

Կողմերն առանձնացրել են Հայաստան այցելող Իրանի քաղաքացիների կողմից ՀՀ օրենսդրության չիմացության արդյունքում առաջացող խնդիրները: ՀՀ գլխավոր դատախազն ընդգծել է, որ հաշվի առնելով երկու երկրների օրենսդրությունների տարբերությունները, անհրաժեշտ է մշակել երկկողմ իրավական փոխօգնության հստակ, դետալային և մատչելի մեխանիզմ, ինչը իրավական պաշտպանության ճիշտ կազմակերպման հնարավորություն կտա ինչպես ԻԻՀ-ում ՀՀ քաղաքացիների, այնպես էլ ՀՀ-ում ԻԻՀ քաղաքացիների համար:

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

ՀՀ գլխավոր դատախազն ընդգծել է, որ վիճակագրական տվյալները վկայում են ՀՀ-ում հիճ քաղաքացիների կողմից կատարված



և ՀՀ-ում հիճ քաղաքացիների նկատմամբ կատարված հանցագործությունների դինամիկ նվազման մասին:

Իհճ արդարադատության նախարարն իր հերթին ներկայացրել է վիճակագրական տվյալներ հիճ քաղաքացիների ՀՀ այցելություններ

րի վերաբերյալ, ըստ որի այս ոլորտում դինամիկ աճ է գրանցվել: Զրուցակիցների համոզմամբ սա նաև հաջողված իրավական փոխգործակցության լավագույն արդյունք է: Կողմերը պատրաստակամություն են հայտնել պահպանել այդ կայուն հիմքերը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին առնչվող խնդիրները: Երկուստեք նշվել է, որ այս ոլորտում իրավապահ մարմինները խիստ և հետևողական աշխատանք են իրականացնում: Քննարկվել է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա՝ առավել արդյունավետ համագործակցության ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազի հրամանով Իրանի Իսլամական Հանրապետության արդարադատության նախարար Մոստաֆա Փուրմոհամադին պարզևատրվել է հուշանվերով:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ԴԱՏԱՆԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ



ՀՀ գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել քննարկում՝ ՀՀ-ում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ վեր հանված խնդիրների առնչությամբ ձեռնարկվող աշխատանքների վերաբերյալ:

Հանդիպմանը մասնակցել են ԵՍ

ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի քարտուղար Մ. Կրտռ, ԵՍ ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի քարտուղարության մոնիթորինգի և վերապատրաստումների բաժնի պետ Մ. Ստալինին, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է. Բաբայանը, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Դ. Ավետիսյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Դ. Մելքոնյանը, ՀՀ կենտ-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

րոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավար Դ. Ազատյանը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ա. Սաքապետոյանը, ՀՀ-ում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի, ԱԱԾ-ի և ՔԿ-ի ներկայացուցիչները:

Քննարկվել է միջոցառումների ծրագիրը, որը բաղկացած է 5 բաժնից՝ իրավապահ ոլորտ, օրենսդրական ոլորտ, կառուցվածքային

բարեփոխումների ոլորտ, հաշվետու անձանց վերահսկողության ոլորտ, ինչպես նաև շրջանակային միջոցառումներ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել փողերի լվացման դեմ պայքարին վերաբերող, ինչպես քրեաիրավական քաղաքականությանը, այնպես էլ ոլորտը կարգավորող օրենսդրական բարեփոխումներին վերաբերող փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցերի:

## ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ՏԵՂԱԿԱԼ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՒՏԻՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՈՂՆԵՐԻՆ



ՀՀ գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել հանդիպում մայիսի 10-ից 12-ը աշխատանքային այցով Հայաստանում գտնվող ԵՒՏԻՎ մոնիթորինգի հանձնաժողովի ղեկուցողներ Ջուլետա Գալատիի, Ալան Միլի և հանձնաժողովի քարտուղար Բաս Քլայնի հետ: Հանդիպմանը մասնակցել են Եվրոպայի Խորհրդում ՀՀ մշտական ներկայացուցիչ Ա. Պապիկյանը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է. Բաբայանը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Հարությունյանը, ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետ Վ. Մուրադյանը, կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Ն. Միսակյանը, միջազգային իրավական կապերի բաժնի պետ Ե. Ավագյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Սահմանադրության փոփոխությունների հան-

րաքվեի ընթացքում տեղի ունեցած ընտրախախտումներին, վերջիններիս ուսումնասիրման ընթացքին և իրավական գնահատականներին վերաբերող հարցեր: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Է. Բաբայանն ընդգծել է, որ գլխավոր դատախազի հրամանով ստեղծվել էր հատուկ աշխատանքային խումբ, որն ըստ անհրաժեշտության աշխատում էր հատուկ ռեժիմով:

Հանդիպմանը քննարկվել են Ղարաբաղա-Ադրբեջանական շփման գծում ապրիլի սկզբին քառօրյա պատերազմի թեման և դրա հնարավոր իրավական հետևանքները:

ԵՒՏԻՎ մոնիթորինգի հանձնաժողովի ներկայացուցիչների նախաձեռնությամբ քննարկվել են նաև ՀՀ-ում մարդու իրավունքներին, կոռուպցիայի դեմ պայքարին, դրանում դատախազության դերին վերաբերող հարցեր, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ:





## ՀՀ ՓԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՎ

Օրինականության և իրավակարգի ամրապնդման գործում ներդրած ավանդի, Հայաստանի Հանրապետության դատախազության մարմինների հետ սերտ համագործակցություն ապահովելու համար և Ոստիկանության օրվա կապակցությամբ ՀՀ ԿԱ պետ, գեներալ-լեյտենանտ **Վլադիմիր Գասպարյանը** պարգևատրվել է **հուշանվերով**:

ՀՀ ԿԱ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետի տեղակալ, շտաբի պետ, ոստիկանության գնդապետ **Մարատ Մանուկյանը**, Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կազմակերպված հանցավոր խմբերի և նրանց պարագլուխների կողմից կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ **Մելիք Արզումանյանը**, Երևան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ **Կարեն Բունիաթյանը**, Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ **Արսեն Մեխակյանը** պարգևատրվել են «Համագործակցության ամրապնդման համար» մեդալով:

ՀՀ ԿԱ ոստիկանության մի խումբ աշխատակիցների հայտարարվել է շնորհակալություն:



**ԱՐԱՄ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ**

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական,  
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի «Քրեական իրավունքի  
և քրեական դատավարության իրավունքի» ամբիոնի դասախոս, ի.գ.թ.

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՎԱՐԳԻ ՀԵՏ**

Իրավաբանական գրականության մեջ «սահմանադրականություն» եզրույթը ըստ էության չի ստացել լայն կիրառություն: Ընդունված փաստ է, որ Խորհրդային շրջանում այս եզրույթը երկար ժամանակ միայն կապվում էր արտերկրյա պետությունների հետ: Միայն հետխորհրդային շրջանում «սահմանադրականություն» եզրույթը սկսվեց կիրառվել բավականին լայնորեն՝ չնայած գլխավորապես հատուկ դրան նվիրված հետազոտություններում:

Ուսումնասիրելով «սահմանադրականություն» եզրույթի ծագումնաբանությունը հանգում ենք այն հետևության, որ նշյալի ծագման հիմքերը դրվել են ԱՄՆ-ում և Ֆրանսիայում տեղի ունեցած սահմանադրական զարգացումների արդյունքում: 1787 թվականին ընդունված ԱՄՆ-ի Սահմանադրությամբ ամրագրվեցին հետևյալ ելակետային սկզբունքները՝ սահմանադրության գերակայությունը օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ<sup>1</sup> և իշխանությունների բաժանումն ու հակակշռումը, որպես դրա երաշխավորման միջոց: Միաժամանակ 1789 թվականի օգոստոսի 26-ին Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրի 16-րդ հոդվածում ամրագրվեց, որ «Յուրաքանչյուր հասարակություն, որտեղ ապահովված չէ իրավունքների երաշխավորումը և հաստատված չէ իշխանությունների բաժանումը, ընդհանրապես չունի Սահմանադրություն»: Կարելի է ասել, դեռևս 18-րդ դարում նշված հռչակագրով բարձրացվեց սահմանադրության իրական կամ ձևական բնույթ ունենալու խնդիրը, և դրա հետ պատճառահետևանքային կապի մեջ գտնվող սահմանադրականության առկայության կամ բացակայության հարցը: Հե-

տագայում իրավաբանական և այլ հետազոտություններում «սահմանադրականություն» հասկացությունը ստանում է առավել լայն նշանակություն, այն սկսվում է կիրառվել տարբեր պետությունների հասարակական կառուցվածքի ժողովրդավարական բնութագրման համար<sup>2</sup>:

Սահմանադրականության հայեցակարգը, որը ստացվել է բնական իրավունքի գաղափարներից, հանդիսանում է ավատական բռնապետության բուրժուական-դեմոկրատական հակաթեզ: Այդ շրջանի տեսաբանները ուսուցում են, որ սահմանադրությունը ոչ միայն սահմանափակում է պետական իշխանության սահմանները, այլ նաև հաստատում իշխանական գործառույթների իրականացման գործընթացները: Այլ խոսքերով, հաստատվում է իրավաբանական սահման գերագույն պետական իշխանության կիրառության ոլորտների և սեփականատեր-քաղաքացու իրավունքների միջև: Միաժամանակ կարգավորվում է այն, ինչն ամերիկյան սահմանադրությունն անվանում է «պատշաճ իրավական գործընթաց»: Օբյեկտիվորեն սահմանադրականության (սահմանադրական) պետության, սահմանադրական կառավարման, իրավունքի գերակայության գաղափարները հանդիսանում են պատմականորեն առաջընթացային, ինչպես հենց բուրժուական պետությունը և բուրժուական դեմոկրատիան<sup>3</sup>:

Ինչպես իրավագիտորեն նշել էր Մարկ Տուշնետը՝ «Սահմանադրականությունը Նոր ժամանակների արդյունք է, որը սերտորեն կապված է լիբերալիզմի որպես Միջնադարից Նոր ժամանակների ֆեոդալական կարգերին անցման լայն ընդհանուր եվրոպական երևույթի ուսմունքի և

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

<sup>1</sup> Տե՛ս Берман Г. Дж. Западная традиция права: эпоха формирования. Пер. с англ. М. 1994, с. 370:  
<sup>2</sup> Տե՛ս Конституция в XXI веке: сравнительно-правовое исследование. Отв. Ред. В.Е. Чиркин, М., 2014, с. 10:  
<sup>3</sup> Տե՛ս Государственное право буржуазных и развивающихся стран. М, 1989, с. 67:

գործնականի հետ»<sup>4</sup>: Ըստ էության սահմանադրականությունը կարելի է համարել լիբերալիզմի գաղափարների սահմանադրաիրավական մակարդակում իրացման երաշխավոր, որը անխուսափելիորեն հանգեցնում է տոտալիտարիզմի և ավտորիտարիզմի ոչնչացման, կառավարման ներկայացուցչական տեսանկյունների ծագման, հասարակական կյանքի ժողովրդավարացման և սահմանադրականացման:

Իրավաբանական գրականություն մեջ մշակված չէ սահմանադրականության էության և հայեցակարգային զարգացման, ինչպես նաև կոնկրետ և սպառիչ հատկանիշներով բնութագրելու վերաբերյալ միասնական մոտեցում: Կարծում ենք, որ սահմանադրականության վերաբերյալ հստակ մոտեցումների, հատկանիշների և իրավական ինստիտուտների հետ կապի արձանագրումը միանշանակ արդիական հիմնահարց է, հատկապես հաշվի առնելով այն, որ բազմաթիվ երկրներում նկատվում է սահմանադրականության դեֆիցիտ<sup>5</sup>:

Ուսումնասիրելով հայաստանյան և արտասահմանյան մի շարք իրավագետների մոտեցումները «սահմանադրականություն» հասկացության վերաբերյալ, մենք առանձնացրել ենք դրանցից մի քանիսը որոնք կներկայացնենք ստորև:

Այսպես՝ ըստ պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանի. «Սահմանադրականությունը իրավաբանական համակարգ է, հիմնված ոչ միայն պետության հիմնական օրենքի, այլև սահմանադրական դոկտրինայի և սահմանադրական սովորույթների վրա: Սահմանադրականությունն ուսմունք է, որի ձևավորման, զարգացման և կատարելագործման հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությունը խիստ արդիական է: Այս առումով, անհրաժեշտ է ընդգծել, որ հայրենական իրավագիտության մեջ սահմանադրականության հիմնախնդիրը սկսվել է ուսումնասիրվել հետխորհրդային ժամանա-

կաշրջանում, այսինքն՝ անկախ պետականության պայմաններում»<sup>6</sup>:

Պրոֆեսոր Ս.Ա. Ավագյանը դիտարկում է սահմանադրականությունը որպես բարդ հասարակական-քաղաքական և պետաիրավական կատեգորիա, որի հիմքեր հանդիսանում են սահմանադրական ժողովրդավարական գաղափարները (այսինքն դեմոկրատիայի, որը հենվում է սահմանադրության որպես պետության և հասարակության հատուկ փաստաթղթի առկայության վրա), իշխանության որոշակի ինստիտուտների, դեմոկրատիայի արժեքների և համապատասխան քաղաքական ռեժիմի սահմանադրության, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների, ամբողջ սահմանադրական կառույցի պաշտպանության համակարգի առկայության վրա<sup>7</sup>:

Իրավագիտության դոկտոր Հ. Բաչատրյանը գտնում էր, որ սահմանադրականությունը սոցիալական պահանջ է, որի կարիքը զգում են թե՛ քաղաքական համակարգը և թե՛ իրավական համակարգը և ըստ վերջինիս պնդման սահմանադրականությունը (կոնստիտուցիոնալիզմը) «պահանջում է ամեն անգամ իշխանությունը «կաշկանդել» սահմանադրական նորմով, այն սահմանափակել՝ ի շահ համապատասխան խնդիրների, նախատեսել իշխանության կառուցվածքների նկատմամբ հսկողության մեխանիզմներ և սահմանել պետական մարմինների ու պաշտոնատար անձանց պատասխանատվությունը»<sup>8</sup>:

Հեղինակավոր իրավագետ, պրոֆեսոր Ստիվեն Հոլմսը սահմանադրականության վերաբերյալ իր աշխատությունում նշել է. «Սահմանադրականության սկզբունքը ենթադրում է ոչ միայն քաղաքական կյանքի կազմակերպման հնարավորություն, այլև դրա կազմակերպման ինչ-որ մի իդեալական ձեռք բարձր դիրքեր գրավող քաղաքական գործիչներին ենթակայեցնելով առավել բարձր օրենքի, ինչի միակողմանի փոփոխելը նրանց կտրականապես չի թույլատրվել»<sup>9</sup>:

Ըստ ամերիկացի սահմանադրագետ Մարկ

<sup>4</sup> St'u Mark V. Tushnet, The Possibilities of Comparative Constitutional Law 1999 Yale Law Journal, p. 1225:

<sup>5</sup> St'u Գ.Գ. Հարությունյան, Սահմանադրական մշտադիտարկում. -Եր.: Նժար, 2016, խմբագիրներ՝ Ա.Ա. Մանասյան, Ա.Պ. Վարդեանյան, էջ 105

<sup>6</sup> St'u Գ. Գ. Հարությունյան, Սահմանադրական մշակույթ: Երեւան, «Նժար», 2005թ:

<sup>7</sup> St'u Авакьян С. А. Конституционализм. Конституционное право. Энциклопедический словарь. М. 2000. С. 304-305. Նույն հեղինակը. Конституция России: природа, эволюция, современность. 2-е изд. М., 2000. С. 228-232.

<sup>8</sup> St'u Բաչատրյան Հենրիկ, Սահմանադրությունը և կոնստիտուցիոնալիզմի հիմնահարցերը: Երևան, 1998:

<sup>9</sup> St'u Стивен Холмс, Конституции и конституционализм //Сравнительное Конституционное Обозрение, 2012, N3(88). - С.59.

Բրենդոնի, սահմանադրականությունը իրենից ենթադրում է այնպիսի մի համակարգ, որը ապահովում է քաղաքական իշխանության կամայականության սահմանափակումը<sup>10</sup>:

Խոսելով սահմանադրականության վերաբերյալ՝ Ն.Ս. Բոնդարը կարծում է, որ ինքն իրեն սահմանադրականություն կատեգորիան հանդիսանում է ռեալ հասարակական հարաբերությունների առավել կարևոր որակական բնութագրիչների գիտատեսական և միաժամանակ նորմատիվ իրավական արտացոլում պետության մեջ իշխանության կազմակերպման և ազատության ձեռք բերված մակարդակների տեսանկյուններից: «Այս պլանում, - գրում է նա, - մեզ համար սկզբունքային նշանակություն ունի այն հանգամանքի ընդունումը, որ սահմանադրականությունը իր արտահայտման ցանկացած ձևում՝ որպես քաղաքական-իրավական (սահմանադրական) գաղափարախոսություն, իրավաբանական աշխարհընկալում, քաղաքական և իրավական, գործնական և այլն, իրենում մարմնավորում է հասարակության և անհատի, քաղաքացու և պետության շահերի, իշխանության և ազատության միջև հասարակությունում ձեռք բերված փոխգիշումների ցուցանիշները: Քաղաքացու և մարդու իրավունքների և ազատությունների ինստիտուտները, առանց չափազանցության, հանդիսանում են ժամանակակից սահմանադրականության այցեքարտ»<sup>11</sup>:

Ըստ Ն.Վ. Վիտրուկի, սահմանադրականությունն իրենից ենթադրում է իրավական սահմանադրության առկայության, գերակայության և դրա նորմերի պետության ողջ տարածքում անմիջականորեն գործողության և պաշտպանության ապահովման համակարգ<sup>12</sup>:

Ի.Ա. Կրավցեցը սահմանադրականության վերաբերյալ իր աշխատության մեջ նշել է, որ հասարակական առաջընթացի «չափման» համար բավարար չէ արտադրության եղանակների դիալեկտիկայի առաջնային սխեմաների դիտումը, այլ պետք է բացահայտվեն և գործառնության մեջ դրվեն նաև բազմաթիվ այլ չափո-

րոշիչներ, հայտնի աշխարհընկալումային տեսանկյուններից նույնիսկ առավել կարևոր, քանի որ հնարավորություն են ընձեռում հասարակական գոյի տնտեսական բնութագրիչներին զուգահեռ ստանալ նրա սոցիալական, հոգևոր, պետաիրավական վիճակի հստակ, հավաստի պատկեր: Նման չափորոշիչների առաջնային շարքում նա դիտարկում էր հենց իրական սահմանադրականության երևույթը<sup>13</sup>:

Պետք է նկատել, որ գիտության կողմից ընդունված են «իրական, փաստացի սահմանադրություն» կամ «ձևական, կարծեցյալ սահմանադրություն» լակոնիկ, միաժամանակ ծավալուն հասկացությունները<sup>14</sup>: Հատկանշական է նաև, որ սահմանադրականություն հասկացությունն ուղղակիորեն կապված է նշված հասկացությունների հետ, քանի որ ձևական, կարծեցյալ սահմանադրություններ ունեցող հասարակությունները չեն կարող զուտ դրա առկայությամբ երաշխավորել սահմանադրականության առկայությունը: Նշված դիրքորոշման լույսի ներքո, հատկապես արդիական է պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանի մոտեցումը, որը մենք ամբողջությամբ կիսում ենք. «Սահմանադրությունից մինչև սահմանադրականություն ճանապարհը չի ավարտվում երկրի Հիմնական օրենքի ընդունումով, անցումային դրույթներով նախատեսված ինչ-ինչ նախապատրաստական քայլերով, անհրաժեշտ ինստիտուտների ու կառույցների ձևավորումով, մարդու իրավունքներն ու ազատությունները Սահմանադրության մեջ ամրագրելով<sup>15</sup>»: Այսինքն ինքնին Սահմանադրության առկայությունը չի ենթադրում սահմանադրականության հաստատում: Ավելին՝ Մեծ Բրիտանիան, որն ըստ մի շարք հետազոտությունների հանդիսանում է սահմանադրականության բարձր մակարդակ ունեցող երկրներից մեկը, չունի մեկ առանձին Հիմնական օրենք:

Պետք է նկատել նաև, որ «սահմանադրականություն» հասկացությունն իրենից չի են-

<sup>10</sup> Տե՛ս Mark E. Brandon Constitutionalism and constitutional failure, The Good Society, Vol. 9, No. 2 (1999), p. 62-63:

<sup>11</sup> Տե՛ս Бондарь Н.С. Права человека в теории и практике российского конституционализма //Российский конституционализм: проблемы и решения. М., 1999, с. 2000:

<sup>12</sup> Տե՛ս Витрук Н.В. Конституционное правосудие в России (1991-2000гг.): Очерки теории и практики., М., 2001, с. 104-105:

<sup>13</sup> Տե՛ս Кравец И.А. Формирование российского конституционализма (проблемы теории и практики). - М., 2002.- с. 30-32

<sup>14</sup> Մանրամասն տե՛ս Хабриева Т.Я., Чиркин В.Е. Теория современной конституции - М.: Норма, 2007, с. 105-110:

<sup>15</sup> Տե՛ս Գ.Գ. Հարությունյան, Սահմանադրությունից՝ սահմանադրականություն - Եր., «Նժար», 2004թ., էջ 6:

թաղրում զուտ սահմանադրական իրավունքի դոկտորինայի, տեսության ինստիտուտ: Սահմանադրականությունը հարկավոր է դիտարկել և ընդունել ոչ թե որպես սահմանադրական իրավունքի կամ իրավունքի տեսության մի մաս, այլ որպես իրավունքի հիմնարար սկզբունք:

Նշված մոտեցումները հաշվի առնելով՝ գտնում ենք, որ առավել ընդհանուր բնորոշմամբ սահմանադրականությունը սահմանադրական արժեքների, կանոնների ու սկզբունքների առկայությունն է հասարակության յուրաքանչյուր անդամի սոցիալական վարքագծի բոլոր դրսևորումներում: Նշվածի երաշխավորման միջոցը պետք է հանդիսանա իրական և գործող Սահմանադրությունը, սակայն ինքնին դրա առկայությունը բավարար չէ: Նշվածին հասնելու համար անհրաժեշտ է ոչ թե պարզապես Սահմանադրության կիրառման ապահովումը, այլ ամրագրված սահմանադրական իրավադրույթներին ոգի տալը, կենդանություն հաղորդելը, ստեղծելն այնպիսի սոցիալական միջավայր, որում կարժևորվեն նշված կանոնները: Այդ հմաստով, այնուամենայնիվ, պետք է նկատել, որ պարտադիր է նաև համապատասխան քաղաքական մշակույթի և ավանդույթի ձևավորումը՝ միաժամանակ բացառելով իրավական ժխտողականության դրսևորումները: Այս համատեքստում կցանկանանք հատկապես ընդգծել պետության կառավարման համակարգի փաստացի գործելու կամ չգործելու հանգամանքը: Իրավագետ Յու. Պուզդրաչը գտնում է, որ սահմանադրականությունն ուղղակիորեն կապված է նաև պետության կառավարման համակարգի առկայության հետ<sup>16</sup>, իսկ իրավագետ Լարիսա Սոնինան հստակ կապ է տեսնում սահմանադրականության և իրավաքաղաքական ռեժիմի միջև, որի դերը հասարակության ներսում արդարության ու ներդաշնակության երաշխավորումն է<sup>17</sup>: Համաձայն լինելով նշյալ դիրքորոշումների հետ և դիտարկելով իրական, գործող, ժողովրդավարական կառավարման համակարգի առկայությունը որպես սահմանադրականության կայացման միջոց, ցանկանում ենք անդրադարձ

կատարել կառավարման համակարգի ձևերին և դրա հետ կապված Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած զարգացումներին:

Ներկայումս հանրապետական կառավարման երեք ձևերի՝ նախագահական հանրապետություն, կիսանախագահական (կիսախորհրդարանական, խառը) հանրապետություն և խորհրդարանական հանրապետություն տարանջատումը լայն ճանաչում է գտել: Բնական է, որ պետական կառավարման առանձին տարատեսակների շրջանակներում յուրաքանչյուր պետության կառավարման մոդելն ունի իր յուրահատկությունները, սակայն վստահաբար կարող ենք նշել, որ նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական կառավարման համակարգերը փաստացիորեն կարող են ապահովել ժողովրդավարության բարձր մակարդակ, հետևաբար հանդես գալով նաև սահմանադրականության կայացման միջոց: Միաժամանակ գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության դեպքում հատկապես պետք է հաշվի առնել, թե այդ համակարգերն ինչպես են գործել և զարգացել հետխորհրդային այլ հանրապետություններում: Համապատասխան ուսումնասիրությունները հանգում են նրան, որ բացառությամբ Էստոնիայից, Լատվիայից, Մոլդովայից, Վրաստանից և Ուկրաինայից, մնացած հետխորհրդային հանրապետություններում, որտեղ որդեգրվել են նախագահական կամ կիսանախագահական կառավարման համակարգերը, ժողովրդավարությունը գտնվում է ցածր մակարդակի վրա և այդ երկրներում նույն անձինք նախագահում են ավելի քան քսան տարի, ինչն անխուսափելիորեն հանգեցնում է պետական իշխանության ճյուղերի միջև զսպումների և հակակշիռների և սահմանադրականության կայացման արգելափակմանը:

Ուշադրության է արժանի նաև Վայլի այն կարծիքը, որ սահմանադրականության առկայության կամ բացակայության հարցն ուղղակիորեն դիտարկվում է պետության ժողովրդավարական կառավարման համակարգի և իշխանությունների փաստացի գործող զսպումների և հակակշիռների համակարգի հետ<sup>18</sup>:

<sup>16</sup> St'u Пуздрач Ю.В. История российского конституционализма IX-XX веков. СПб., 2004. с. 55:

<sup>17</sup> St'u Сони́на Л.В. Конституционализм в Российской Федерации как политико-правовой режим: Автореф. дис. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2001. с. 7-8:

<sup>18</sup> St'u M.J.C. Vile, Constitutionalism and Separation of Powers (Second Edition, Liberty Fund) 1998, с. 25 :

Հայաստանի Հանրապետությունը 1995 թվականին ընդունված Սահմանադրությամբ որդեգրել էր նախագահական կառավարման համակարգը: Չնայած նրան, որ նշված համակարգը մի շարք երկրների դեպքում ապահովել է ժողովրդարության և իրավական պետության սկզբունքների պատշաճ իրացում, սակայն Հայաստանի Հանրապետությունում այն, գրեթե վերածվել էր տեսությունում ընդունված «սուպերնախագահական» համակարգի, քանի որ գործադիր իշխանությունը և հատկապես վարչապետն օժտված չէին բավարար լիազորություններով, ինչը լրջագույն խոչընդոտ էր հակակշիռների ու զսպունների գործուն համակարգի արմատավորման համար, ինչն իր հերթին չէր կարող բարենպաստ պայմաններ ստեղծել սահմանադրականության կայացման համար: Հայաստանի Հանրապետությունում 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքում իրականացված սահմանադրական փոփոխություններով էապես վերանայվեց կառավարման համակարգի մոդելը և անցում կատարվեց կիսանախագահական համակարգին: Հստակ լուծումներ տրվեցին գործադիր իշխանության կայացման համար, մասնավորապես, ի թիվս այլ լուծումների, ՀՀ օրենսդրությունից վերացնելով այն կարգավորումը, համաձայն որի Հանրապետության Նախագահն էր ղեկավարում կառավարության գործունեությունը և նախագահում կառավարության նիստերը: Սակայն փաստացի գործադիր իշխանության ոլորտին վերապահված մի շարք լիազորություններ շարունակեցին իրականացվել Հանրապետության Նախագահի կողմից, ինչն իրենից ենթադրում է չհակակշռված լիազորություններ, քանի որ Հանրապետության Նախագահը փաստացի չունեի համարժեք քաղաքական պատասխանատվություն: Ինչպես իրավագիտորեն նշվել էր Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, մշակված «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» փաստաթղթում «Գործադիր իշխանության ներքին երկվությունը՝ պայմանավորված Հանրապետության Նախագահի և կառավարության գործառույթային լիազորություններով, բավարար չափով հստակեցված չէ, ինչի արդյունքում կա-

ռավարությունն ամբողջական ու համալիր պատասխանատվությամբ չի իրականացնում գործադիր իշխանությանը բնորոշ գործառույթները<sup>19</sup>»:

Հայաստանի Հանրապետությունում կիսանախագահական կառավարման համակարգն ապահովող սահմանադրական կարգավորումները ոչ միայն հանգեցնում էին գործադիր իշխանության, այլ նաև պառլամենտարիզմի կայացման արգելափակմանը: ՀՀ Սահմանադրությամբ (2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված խմբագրության տեքստ) նախատեսված չէին բավարար երաշխիքներ Ազգային ժողովի օրենսդրական ու վերահսկողական գործունեության լիարժեք իրականացման համար, ինչպես նաև որևէ կարգավորում նախատեսված չէր խորհրդարանական փոքրամասնության հակակշռող դերի արդյունավետ իրականացման համար:

Միանշանակ է, որ ներկայացված խնդիրները սպառիչ չեն և դրանց թվին կարելի է դասել նաև այլ խնդիրներ, որոնք պայմանավորված են, ի թիվս այլ հանգամանքների, նաև կիսանախագահական կառավարման համակարգով:

Ընդունված և տրամաբանական է այն մտեցումը, որ կառավարման համակարգը չի կարող արդյունավետ լինել, եթե այն լիարժեքորեն չի ապահովում իշխանության յուրաքանչյուր թևի հարաբերականորեն անկախ ու լիարժեք գործունեությունը: Բնական է, որ նման իրավիճակ կարող է առաջանալ համապատասխան իրավամտաճողության և մշակույթի պարագայում, չնայած անհրաժեշտ և բավարար սահմանադրական կառուցակարգերի, սակայն ինչպես նշել էինք Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված կառուցակարգերն ինքնին ստեղծում էին իշխանությունների տարանջատման և հավասակշռման արգելակներ:

Պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանն, անդրադառնալով կառավարման համակարգի արդյունավետության հիմնահարցին, իրավագիտորեն նշել էր, որ դրա իրացման արդյունքում «...մի կողմից պետք է ապահովվի իշխանության յուրաքանչյուր թևի հարաբերականորեն անկախ ու լիարժեք գործունեությունը՝ չխաթարելով գործառույթ - ինստիտուտ - իրավասություն համա-

<sup>19</sup> Տե՛ս <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>, էջեր 28-29:

կարգի հավասարակշռությունը, մյուս կողմից՝ անհրաժեշտ ու բավարար հակակշիռների ու զսպումների շնորհիվ պահպանվի այդ ներդաշնակությունը դինամիկայում<sup>20</sup>»:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեի արդյունքում ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններով անցում կատարվեց ժամանակակից խորհրդարանական կառավարման համակարգի՝ գործող կիսանախագահական կառավարման ձևից: Նշված համակարգի անցումը երաշխավորում է, որ Հանրապետության Նախագահը գործադիր իշխանության իրականացման հետ որևէ անմիջական կապ չի ունենալու և վերջինիս գործառույթներն էսպես այլ բնույթ են կրելու ու հիմնական շեշտը դրվելու է Սահմանադրության դրույթների պահպանման հետ կապված գործառույթներին:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում հստակ սահմանվում է Ազգային ժողովի առանցքային դերակատարությունը հասարակության քաղաքական կամքի ձևավորման ժամանակ՝ միաժամանակ անհրաժեշտ և իրական ինքնուրույնություն ընձեռելով կառավարությանը երկրի ներքին և արտաքին քաղաքականության մշակման և իրականացման հարցերում, միաժամանակ նախատեսելով օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև համագործակցության կառուցակարգեր, որոնք կկանխարգելեն պետական իշխանության ճյուղերի միջև հնարավոր բախումները և երկրում քաղաքական ճգնաժամային իրավիճակները: Խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետ գործելու համար հարկավոր է ապահովել երաշխիքներ խորհրդարանի և կառավարության կայունության վերաբերյալ, ինչը և երաշխավորվել է Սահմանադրությամբ՝ կայուն խորհրդարանական մեծամասնության ինստիտուտի ամրագրմամբ:

Ինչպես նշել էինք, Հայաստանում կիսանախագահական կառավարման համակարգի թերություններից և համակարգային խնդիրներից մեկը հանդիսանում էր գործադիր իշխանությանը վերաբերող մի շարք լիազորությունները Հանրապետության Նախագահին վերա-

պահելուն՝ համապատասխան քաղաքական պատասխանատվության բացակայության պարագայում: Սահմանադրությամբ նախատեսված խորհրդարանական կառավարման համակարգը բնութագրվում է նրանով, որ կառավարությունը լիարժեքորեն իրականացնելու է իրեն նախատեսված լիազորությունները և քաղաքական պատասխանատվություն է կրելու խորհրդարանի առջև իր վարած քաղաքականության համար և իր ստեղծման ու գոյատևման համար կախված է լինելու խորհրդարանի վստահությունից: Նշվածը լիարժեքորեն բխում է պետական իշխանության ճյուղերի միջև զսպումների և հակակշիռների ապահովման սկզբունքից, իսկ մեր կարծիքով այդ սկզբունքի լիարժեք իրացումն անխուսափելիորեն հանգեցնելու է սահմանադրականության մակարդակի բարձրացմանը:

Հատկապես կարևորվում է նաև 2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեի արդյունքում ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններով խորհրդարանական փոքրամասնությանը վերապահված համարժեք իրավունքների առկայությունը, որը ևս մեկ երաշխիք է խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետորեն գործելու համար:

Սահմանադրական նոր կառուցակարգերն ըստ էության ապահովում են իշխանության յուրաքանչյուր թևի հարաբերականորեն անկախ ու լիարժեք գործունեությունը և չեն խաթարում գործառույթ - ինստիտուտ - իրավասություն համակարգի հավասարակշռությունը, միաժամանակ ապահովելով անհրաժեշտ ու բավարար հակակշիռների ու զսպումների հնարավորությունը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման համակարգը կարող է սկիզբ դնել սահմանադրական նոր մշակույթի ձևավորմանը, որի հիմքում կլինեն պետական իշխանության ճյուղերի միջև զսպումների և հակակշիռների սկզբունքի իրացումը, քաղաքական պատասխանատվությունը, որը կհանգեցնի սահմանադրականության մակարդակի բարձրացմանը:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

<sup>20</sup> Տե՛ս Գ.Գ. Հարությունյան, Սահմանադրությունից՝ սահմանադրականություն – Եր., «Նժար», 2004թ., էջ 35:

**ՊԵՏՐՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության դատախազ, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՂԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՈՒՂՂՈՒՄԸ ՊԱՏԺԻ ԵՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Դատարանը պատիժ նշանակելիս առաջնորդվում է ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներով և նպատակներով: Օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում պատժի ընդհանուր նպատակների թվում սահմանել է նաև անձի ուղղումը: Վերջինը վերաբերում է ինչպես պատժի նշանակման, այնպես էլ պատժի կատարման փուլերին:

Այսպես՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 2-րդ հոդվածը սահմանում է քրեակատարողական օրենսգրքի խնդիրները, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի խնդիրն է, ի թիվս այլնի, ապահովել դատապարտյալի ուղղման համար անհրաժեշտ պայմաններ: Քրեական իրավունքը քրեակատարողականի նկատմամբ կրում է իրավաստեղծ բնույթ, և այն փաստը, որ անձի ուղղման համար անհրաժեշտ պայմաններ ապահովվելը նախատեսված է որպես ՀՀ քրեակատարողական օրենսգրքի խնդիր, ենթադրում է, որ պատժի քննարկվող նպատակի իրականացումն ուղղակիորեն պայմանավորված է ոչ միայն պատժի նշանակման, այլ նաև պատժի իրականացման հետ:

Գործող քրեական օրենսգրքը (ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մաս) ավանդաբար նախատեսում է դատապարտյալի ուղղումը՝ որպես պատժի նպատակ, սակայն չի բացահայտում այդ եզրույթի բովանդակությունը:

Անհրաժեշտ է նշել, որ Հայերենի բացատրական բառարանի հեղինակ Է.Աղայանը, «ուղղում» եզրույթը լեզվաբանական տեսանկյունից

բացատրում է, որպես՝ «այն ինչ որ ուղղվել է կամ ուղղված բան»<sup>1</sup>: Ռուսական բացատրական բառարանի հեղինակ Ս. Օժեգովը «ուղղում» եզրույթը բացահայտում է, որպես՝ 1) թերությունների, անսարքությունների վերացում, 2) լավացնել՝ ազատվելով ցանկացած տեսակի թերություններից<sup>2</sup>: Այսպես, ընդհանրացնելով անհրաժեշտ է նշել, որ «ուղղումն» առաջին հերթին իրենից ներկայացնում է գործընթաց (օրենքով սահմանված կարգով), որի արդյունքում՝ վերացվում են առկա թերությունները՝ բարելավման ակնկալիքով:

Իսկ գործող քրեակատարողական օրենսգրքը քրեակատարողական տեսանկյունից նախատեսում է դատապարտյալի ուղղման նպատակի հասկացությունը: Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալի ուղղումը մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալի հարգալից վերաբերմունքի ձևավորումն է, ինչպես նաև վերջինիս օրինապահ վարքագծի խթանումը՝ դատապարտյալի մոտ առողջ կենսակերպի ամրապնդման և զարգացման նպատակով:

Կարծում ենք, որ գործող քրեակատարողական օրենսգրքում դատապարտյալի ուղղման պատժի նպատակի օրենսդրական հասկացությունը պետք լրացվի այնպես, որ նրանում ընդգրկվի ուղղման նպատակի ինչպես գործընթացը, այնպես էլ դրա վեջնական արդյունքը, քանի որ ակնհայտ է, որ պատիժը կիրառվում է հանցագործություն կատարելու հետևանքով, հետևաբար պատժի նպատակները պետք

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

<sup>1</sup> Տե՛ս Աղայան Է.Դ. Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատ., Երևան, 1976, էջ 1493:  
<sup>2</sup> Տե՛ս Ожегов СИ., Шведова Н.Ю. Толковый словарь русского языка. М. 1996, էջ 249:



է կապված լինեն հանցագործության հետ, ուստի նպատակահարմար է դատապարտյալի ուղղման՝ որպես պատժի նպատակի բովանդակության մեջ ներդնել դատապարտյալի կողմից պատիժը կրելուց հետո նոր հանցագործություններ կատարելուց զերծ մնալու գաղափարը: Ավելին, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածում սահմանված դատապարտյալի ուղղման օրենսդրական հասկացության ուսումնասիրությունից հետևում է, որ այն առավել լայն է, քան դատապարտյալի իրավաբանական ուղղման հասկացությունը, քանի որ այդ հոդվածի համաձայն ուղղումն իր մեջ պետք է ներառի.

1. մարդու, հասարակության, համակեցության կանոնների և ավանդույթների նկատմամբ դատապարտյալի հարգալից վերաբերմունքի ձևավորում,
2. օրինապահ վարքագծի խթանում՝ դատապարտյալի մոտ առողջ կենսակերպի ամրապնդման և զարգացման նպատակով:

Ակնհայտ է, որ այդպիսի վեհ նպատակների նախատեսումը և դրանց իրականացումը միայն քրեական հարկադրանքի միջոցներով գործնականում չափազանց դժվար է, ուստի կիսում ենք Ե.Ն. Ջայցևայի կողմից արտահայտված այն կարծիքը, որ ուղղման օրենսդրական հասկացությունն անհրաժեշտ է սահմանել այնպես, որ առաջին հերթին այն կարգավորի դատապարտյալի հարգալից վերաբերմունքի ձևավորումը պետության սահմանած իրավական նորմերի և վարքագծի կանոնների նկատմամբ, ինչպես նաև խթանի օրինապահ վարքագիծ<sup>3</sup>:

Դատապարտյալի ուղղման օրենսդրական հասկացության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նաև բացահայտել այդ հասկացության վերաբերյալ առկա տեսական մոտեցումները՝ հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ այդ հասկացությունն երկար ժամանակ եղել է բազմաթիվ իրավաբան-գիտնականների ուշադրության կենտրոնում:

Այսպես, Ա.Մ. Ռեյտբորտը նշում է, որ ուղղման նպատակի տակ պետք է հասկանալ դատապարտյալի սովորության և վերաբերմունքի այնպիսի փոփոխություններ, որոնք բացառում են նրա կողմից նոր հանցանք կատարելու հնարավորությունը: Հանցանք կատարած անձի ուղղումն այնպես պետք է դրսևորվի, որ պատժի նշանակման միջոցով փոխվի նրա հոգեբանությունը, գիտակցությունից բացառվեն անցյալի այն մնացուկները, որոնց ազդեցության տակ նրա կողմից կատարվել է այդ հանցագործությունը, և այդ անձի մոտ ամրապնդվի ինչպես օրենքի նկատմամբ հարգանքի զգացում, այնպես էլ ազնվորեն ապրելու և աշխատելու ցանկություն<sup>4</sup>:

Ն.Ա. Բելյակը կարծում է, որ ուղղելը խնդիր է, որի լուծումը պետք է տրվի պատժի իրականացման ժամանակ: Հանցանք կատարած անձի ուղղման մասին կարելի է խոսել այն ժամանակ, երբ պատժի ազդեցության տակ նրա գիտակցության մեջ կատարվում է փոփոխություն, որի դեպքում հանցագործը թեև չի վերածվում ակտիվ, գիտակից հասարակության անդամի, բայց կարող է համարվել հասարակության համար անվտանգ<sup>5</sup>:

Բ.Վ. Յացելենկոն նշում է, որ դատապարտյալի ուղղումը կայանում է նրանում, որ պատժից միջոցների օգնությամբ փոփոխության ենթարկվեն դատապարտված անձի այն բացասական որակները, որոնց առկայության պայմաններում կատարվել է հանցավոր արարքը, ինչպես նաև ստեղծվի օրենքը, այլ անձանց իրավունքները և շահերը հարգելու միջավայր: Դատապարտյալի ուղղումը ենթադրում է օրենքով սահմանված կարգով պատժի ենթարկելու միջոցով այնպիսի արդյունքների նվաճում, որ փաստացի պատիժ կրած անձը զերծ մնա նոր հանցագործություն կատարելուց: Խոսքը տվյալ դեպքում դատապարտյալի իրավաբանական ուղղման մասին է, որն առավելագույն հնարավորությունն է, որին կարող է հասնել նշանակված քրեական պատիժը<sup>6</sup>:

Ա.Է. Ժալինսկին նշում է, որ դատապարտ-

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

<sup>3</sup> Ст'я Зайцева Е.Н. Цели наказания и средства их достижения в исправительных учреждениях. Автореф. дис. ... канд. юрид. наук. - Краснодар, 1998, с. 17.

<sup>4</sup> Ст'я Советское уголовное право. Часть общая. М. 1964, с. 230-231.

<sup>5</sup> Ст'я Беляев Н.А. Уголовно-правовая политика и пути ее реализации. Л. 1986, с. 46.

<sup>6</sup> Ст'я Уголовное право России. Общая часть: Учебник. Под ред. А.И. Рагога. М.: 2009, с. 210.

յալի ուղղման նպատակը համարվում է կայացած, երբ նա չի կատարում նոր հանցագործություն<sup>7</sup>:

Ա.Վ. Նաումովայի կարծիքով, ուղղումը ենթադրում է հանցավոր արարք կատարած անձին օրինապաշտ քաղաքացի դարձնելը: Իհարկե խոսքը չի գնում այն մասին, որ հանցավոր արարք կատարած անձը պատիժը կրելու ընթացքում դառնա բարձր հատկանիշներով օժտված բարոյական մարդ: Այն իրական խնդիրը, որը կարելի է լուծել ուղղման ժամանակ, այդ թվում պատժի սպառնալիքի միջոցով դատապարտվածին ստիպելը և համոզելն է, որ կրկին անգամ չխախտի քրեական օրենքը, այսինքն՝ ապագայում չկատարի նոր հանցավոր արարքներ<sup>8</sup>:

Ա.Ի. Ռառոզը փաստում է, որ դատապարտյալի ուղղման նպատակը դրսևորվում է պատժողական-դաստիարակչական միջոցներով պատիժը փաստացի կրելուց հետո նոր հանցագործություններ չկատարել դատապարտյալին հարկադրելուն: Այս դեպքում, խոսքը միայն իրավաբանական ուղղման չափանիշների մասին է<sup>9</sup>:

Այսպես, հաշվի առնելով վերոհիշյալը, կարծում ենք, որ քրեակատարողական իրավունքի տեսանկյունից դատապարտյալի ուղղման հասկացության բովանդակությունը թույլատրելի է տարածել նաև քրեաիրավական իմաստով ուղղման վրա: Այս առումով, անհրաժեշտ է նաև արձանագրել, որ քրեական իրավունքի մի շարք դասագրքերի հեղինակներ դատապարտյալի ուղղման նպատակի հասկացության բացահայտման համար դիմում են քրեակատարողական օրենսգրքում սահմանված դատապարտյալի ուղղման հասկացությանը<sup>10</sup>: Այս առումով, իհարկե անհրաժեշտ է հաշվի առնել, որ ի տարբերություն քրեական օրենսգրքի քրեակատարողական օրենսգրքին այդ նպատակի համար նախատեսում է առավել լայն գաղափար:

Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ քրեակատարողական օրենսդրությունը մի կողմից ազատ է պատժի կրման ընթացքում պատժի նպատակներին հասնելու ճանապարհների ընտրության հարցում, մյուս կողմից՝ պետք է առավել մեծ ազդեցություն ունենա դատապարտյալի ներքնաշխարհի վրա:

Քրեական իրավունքի տեսությունում գոյություն ունեցող տարածայնություններն այն մասին, թե ուղղումը պետք է լինի «իրավաբանական», թե «բարոյական», այնուամենայնիվ, չեն կարող ազդել դրա բովանդակային ուղղվածության չափանիշի վրա, քանի որ անկախ այն հանգամանքից՝ ուղղումը «իրավաբանական» է, թե «բարոյական», այն առաջին հերթին իրականացվում է նոր հանցագործություններ կատարելուց զերծ պահելու նպատակով:

Մի շարք հեղինակներ նշում են, որ նշանակված պատիժը, ազդելով դատապարտյալի վրա, կարող է միաժամանակ դաստիարակել: Ն.Ա. Ստրուկովայի կարծիքով, «պատիժն ինքնին դաստիարակում է դատապարտյալին իր բովանդակությամբ՝ պատժելով: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ պատժի կիրառման ընթացքում դատապարտյալը պատժվում և դաստիարակվում է, սակայն պատժի բովանդակությունը դրսևորվում է միայն պատժելում»<sup>11</sup>: Ի.Ի. Կարպեցը համոզված է, որ դաստիարակումն ինքնին լայն հասկացություն է, որն ընդգրկում է ցանկացած երևույթ, ինչն ուղղակի կապված է մարդու բարոյական ձևավորման հետ, մինչդեռ դա չի ենթադրում, որ պատիժը չի հանդիսանում դաստիարակման միջոց: Անհնար է դաստիարակել անձին՝ պատժի նշանակման և իրականացման ողջ ընթացքում: Եթե անձի վերադաստիարակումը չի իրականացվել նրա կյանքի նախորդ տարիներում, ապա դա չի կարող տեղի ունենալ պատժի կրման ընթացքում,

<sup>7</sup> St'u Комментарий к Уголовному кодексу Российской Федерации. М., 1998, с. 43-44.

<sup>8</sup> St'u Наумов А.В. Российское уголовное право: Курс лекций. В двух томах. Т.1: Общая часть. 3-е изд., перераб. и доп. М., 2004, с. 346.

<sup>9</sup> St'u Уголовное право. Части Общая и Особенная: курс лекций / Г.А. Есаков, А.И. Парог и др.; Под ред. А.И. Парога, с. 126.

<sup>10</sup> St'u Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) / Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 381; Иванов В.Д. Уголовное право. Общая часть. Ростов н/д., 2002, с. 192; Уголовное право Российской Федерации. Общая часть: Учебник для вузов / Под ред. В.С. Комиссарова, Н.Е. Крыловой, И.М. Тяжковой. М.: Статут, 2012, с. 550.

<sup>11</sup> St'u Стручкова Н.А. Курс исправительно-трудового права. Проблемы общей части. М., 1984, с. 24.

սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ հիշյալ հանգամանքը չի ենթադրում, որ նշանակված պատիժը դաստիարակելու միջոց չէ<sup>12</sup>:

Պարզելու համար, թե արդյոք նշանակված պատիժը նպատակ է հետապնդում ուղղվելուց զատ «դաստիարակել» դատապարտյալին, կարծում ենք անհրաժեշտ է առաջին հերթին բացահայտել դաստիարակել եզրույթի բովանդակությունը: Այսպես.

Հայերենի բացատրական բառարանում «դաստիարակել» եզրույթը բացահայտվում է հետևյալ կերպ. «Կրթել, որոշ հմտություններ՝ վարքուբարքի կանոններ ու գիտելիքներ սովորեցնել: Ընձեռել մտքերի ու զգացումների զարգացման որոշ ուղղություններ (...)»<sup>13</sup>: «Դաստիարակում» եզրույթը բացահայտվում է ինչպես լայն, այնպես էլ նեղ իմաստներով: Այսպես՝ լայն իմաստով դաստիարակությունը որպես բնական, տարերային, օբյեկտիվ հասարակական գործընթաց, ենթադրում է անձի կատարելագործման գործընթացն ու նրա արդյունքը, այն իր մեջ ներառում է անձի զարգացման բոլոր կողմերը, զարգացումն ու ձևավորումն ապահովող բոլոր գործոնները, այդ թվում՝ ուսուցումը և կրթությունը<sup>14</sup>: Նեղ իմաստով՝ որպես անձի վարքագիծ՝ բնավորություն, հարաբերությունների մշակույթ, աշխատանքային մշակույթի յուրացում և այլն, այսինքն՝ որպես բարոյական, աշխատանքային, ֆիզիկական և գեղագիտական դաստիարակություն<sup>15</sup>:

Այսպես, հիմք ընդունելով հիշատակված լայն և նեղ իմաստներով դաստիարակության բովանդակային գործընթացը և այն համադրելով ուղղման բովանդակության հետ, կարող ենք եզրահանգել, որ ուղղումը ստեղծում է այն անհրաժեշտ պայմանները (միջավայրը), որոնք ուղղված են պատժի ենթարկված անձին դաստիարակելու համար: Անհրաժեշտ է նաև համաձայնել Ա.Ա. Միցկևիչի կողմից արտահայտված այն կարծիքի հետ, որ «Այն դեպքերում, երբ պատիժը կիրառվում է դատապարտյալի նկատմամբ, ապա խոսք չի կարող գնալ բացառապես «մաքուր» դաստիարակության մասին, այլ անձի վարքագծի շտկման մասին, ով կատարել է հանրային վտանգավոր արարք: Այստեղ խնդիրը բարդանում է: Ոչ միայն անհրաժեշտ է անձի մեջ սերմանել օգտակար վարքագծի հմտություններ, այլ «խլացնել վնասակար սովորությունները, պետք է ոչ միայն ձևավորել նրա բարոյական կերպարը, այլ նաև նրանից բացառել հակասոցիալական հատկանիշները, որոնք առաջացնում են հանրային վտանգավոր վարքագծեր, և դաստիարակել հանրության համար պիտանի և օգտակար որակներ»<sup>16</sup>:

Ի տարբերություն ՀՀ նախկին քրեական օրենսգրքի (20-րդ հոդված), գործող օրենսգրքում ուղղման նպատակը չի կապվում դաստիարակման հետ<sup>17</sup>:

Հետաքրքրական են նաև Խորհրդային

<sup>12</sup> Ст'я Карпец И.И. Наказание. Социальные, правовые и криминологические проблемы. М., 1973, с. 150.

<sup>13</sup> Ст'я Աղայան Է.Դ. Արդի հայերենի բացատրական բառարան «Հայաստան» Հրատ., Երևան, 1976, էջ 278:

<sup>14</sup> Ст'я Подласый И.П. Педагогика, кн. 1, М., «ВЛАДОС», 2002, с. 9.

<sup>15</sup> Ст'я Ղույումջյան Գ.Ե. Մանկավարժություն, գիրք 1-ին, Երևան, 2005, էջ 16:

<sup>16</sup> Ст'я Мицкевич А.Ф. Уголовное наказание: понятие, цели и механизмы действия. Монография / - С.-Пб.: Юрид. центр Пресс, 2005, с. 113.

<sup>17</sup> Այս առումով անհրաժեշտ է նշել, որ ՀՀ քրեական իրավունքի համալսարանական դասագրքում նշվում է, որ «Վերադաստիարակումը ենթադրում է բարոյական դաստիարակություն, որը բազմաբովանդակ և երկարատև գործընթաց է: Հաճախ մարդուն «դաստիարակում են» ամբողջ կյանքի ընթացքում, բայց նա ընկալում է միայն կողմնակի բացասական ազդեցությունը և վերածվում բարոյագործական անձնավորության կամ նույնիսկ՝ հանցագործի: Բնական է, որ նման անձն ի վիճակի չէ երբեք կամ հինգ տարում բարոյապես դաստիարակվել, առավել ևս, անիրական և անիմաստ է նման բան սպասել դատապարտյալից: Պատժի կրումից հետո նա կարող է դեռ ուղղվել, իսկ թե ինչի շնորհիվ (պատժի սպառնալիքի ազդեցությամբ, թե՛ իր բարոյականության ուժով), մեր կարծիքով, էական չէ: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 48-ը նկատի ունի դատապարտյալի ոչ թե բարոյական, այլ իրավական ուղղումը (այս մասին առավել մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով)/ Ս. Առաքելյան, Ա. Գաբրուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ. - Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջ 381): Հատկանշական է, որ Ի.Ս. Նոյր բարոյական ուղղման տակ հասկանում է «դատապարտյալ անձի այնպիսի փոփոխություն, որի պայմաններում նոր հանցագործություններ նա չի կատարի ոչ թե պատժի սպառնալիքի պատճառով, այլ այն պատճառով, որ այդ արարքի կատարումը կհակասի նրա մեջ ձևավորված նոր հայացքներին և համոզմունքներին» (այս մասին առավել մանրամասն տե՛ս Ной И.С. Сущность и функции уголовного наказания в Советском государстве. Саратов, 1973, էջ 114):

Միության քրեական իրավունքի բնագավառի գիտնականների՝ ուղղման և դաստիարակման որպես պատժի նպատակների վերաբերյալ մոտեցումները, քանի որ, ինչպես հայտնի է, այդ ժամանակահատվածում դաստիարակումը հանդիսանում էր պատժի առանձին նպատակ: Այսպես, Ա.Լ. Ռեմենսոնը նշում է, որ իրավախախտի ուղղումը և դաստիարակումը հանդիսանում են ոչ թե պատժի վերջնական նպատակներ, այլ՝ դրան հասնելու միջոցներ: Իհարկե, ուղղումն ու դաստիարակումը հանդիսանում են պատժի նպատակներից մեկը, բայց միևնույն ժամանակ վերջիններս ծառայում են պատժի վերջնական, հիմնական, յուրահատուկ նպատակին՝ նոր հանցագործությունների կանխմանը: Սոցիալիստական հասարակության գիտակից քաղաքացու դաստիարակումը չի կարող հանդիսանալ ոչ քրեական իրավունքի, ոչ էլ պատժի յուրահատուկ խնդիր<sup>18</sup>: Մ.Դ. Շարգարոդսկին, համաձայնելով Ա.Լ. Ռեմենսոնի կարծիքի հետ, նշում է, որ դաստիարակման խնդիրները կհամարվեն իրականացված այն ժամանակ, երբ իրավախախտը, կրելով պատիժը, երբեք չի կատարի նոր հանցագործություն: Այն հեղինակների մոտեցումները, որոնք պահանջում են մեղավորի գիտակցության մեջ իրականացնել բարոյական ուղղման փոփոխություն, ուղղակի դուրս են գալիս այն խնդիրների շրջանակից, որոնք դրված են քրեական իրավունքի առջև: Սոցիալիստական հասարակության գիտակից քաղաքացու դաստիարակումը, որպես ընդհանուր խնդիր, ոչ բոլոր դեպքերում է հնարավոր իրականացնել նույնիսկ ընտանիքում, դպրոցում, հասարակությունում, առավել ևս ցանկալի չէ դնել այդպիսի խնդիր քրեական պատժի միջոցների առջև<sup>19</sup>:

Այս առումով, լեի հեղինակ Ստեֆան Լելենտալը նշում է, որ «պատժի կիրառման դեմ այդպիսի խնդիր դնելը, ինչպես դա իրականացվում է խոհրդային հեղինակների կողմից, գերազանցում է ուղղիչ հիմնարկների իրական

հնարավորության սահմանները (...): Չափազանցված մտադրությունները, որոնք կտրված են իրական վերականգնողական իրականությունից, հանգեցնում են պատժի նպատակների իդեալականացմանը, որը տեսական առումով սխալ է, իսկ գործնական առումով՝ անցանկալի»<sup>20</sup>:

Այսպես, անհրաժեշտ է նշել, որ դատապարտյալի ուղղումը պետք է իրականացվի ակտիվ դաստիարակչական-հարկադրական միջոցներ կիրառելով, որը պետք է ազդի անձի բարոյա-հոգեբանական և սոցիալ-հոգեբանական վիճակի վրա, ինչպես նաև նրան դարձնի օրինապաշտ քաղաքացի և սերմանի հարգանք օրենքի նկատմամբ: Պատժի կրման ընթացքում դատապարտյալը պետք է գիտակցի, որ նոր հանցագործություններ կատարելը կարող է նրա համար առաջացնել բացասական հետևանքներ: Եթե անձը պատիժը կրելու ընթացքում կամ դրանից հետո զերծ է մնում նոր հանցագործություններ կատարելուց, ապա կարող ենք արձանագրել, որ դատապարտյալի ուղղումը, որպես պատժի նպատակ, իրականացված է: Այսպիսով, դատապարտյալի ուղղումը, որպես պատժի նպատակ, կապված է «իրավաբանական» ուղղման հետ, որը դատապարտյալի մոտ ձևավորում է նոր հանցագործություններ չկատարելու «հրամայական», սակայն այն կարող է նաև ստեղծել անհրաժեշտ և բավարար պայմաններ (միջավայր) պատժի ենթարկված անձին դաստիարակելու համար: Դաստիարակելը ենթադրում է՝ պատժի կրման և կամ դրանից հետո անձի մեջ դրական վարքագիծ ձևավորել, իսկ բացասական վարքագիծը, եթե այդպիսին առկա է՝ վերացնել:

Այժմ հարկ է անդրադառնալ անձի ուղղման՝ որպես պատժի նպատակի հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ համաձայն որոշ իրավաբան գիտնականների՝ այդ նպատակը չպետք է նախատեսվի քրեական օրենսդրությունում<sup>21</sup>:

<sup>18</sup> St' u Ременсон А.Л. Теоретические вопросы исполнения лишения свободы и перевоспитания заключённых. Автореф. дис. докт. юрид. наук. Томск, 1965, с. 19.

<sup>19</sup> St' u Шаргородский М.Д. Наказание, его цели и эффективность. - Л.: Изд-во Ленингр. ун-та, 1973, с. 31-32.

<sup>20</sup> St' u Lelental Stefan. Wychowawczy eel kary. Zeszyty naukowe uni-wersytetu Lodzkiego, serja 1, zes 51, 1967, p. 172-173.

<sup>21</sup> St' u Полубинская С.В. К вопросу о целях наказания // Проблемы совершенствования уголовного закона. М., 1984, с. 102; Усс А.В. Социально-интегративная роль уголовного права. Красноярск, 1993, с. 227.

Մասնավորապես, Դ.Ա. Շեստակովայի կարծիքով դատապարտյալի ուղղումը որպես պատժի նպատակ նախատեսելը բոլորովին արդարացված չէ, քանի որ շատ կասկածելի է այն հանգամանքը, թե հնարավոր է ինչ որ մեկին ուղղել պատիժ կիրառելու միջոցով, այն էլ ցմահ ազատագրված կամ մահապատժի<sup>22</sup>:

Ընդհանուր առմամբ հիշյալ դիրքոշումների հիմքում ընկած է այն հիմնավորումը, որ բացակայում են այնպիսի հիմնավորված գիտական չափանիշներ, որոնք կարող են վկայել անձի ուղղման նպատակին հասնելու վերաբերյալ: Բացի այդ, գիտությունը դեռ ամբողջովին չի պատասխանել այն հարցին, թե սկզբունքորեն հնարավոր է արդյոք հանցանք կատարած անձի ուղղումը: Հաշվի առնելով գիտնականների կողմից արտահայտված կարծիքները՝ այնուամենայնիվ անհրաժեշտ է ընդգծել, որ մեր կարծիքով ուղղումը, որպես պատժի նպատակ, ուղղված է հասարակության և պետության կողմից սահմանված պահանջների բավարարմանը, քանի որ այն իրենից ենթադրում է բացառապես օգտակար գործընթաց, որի արդյունքում հնարավորություն է ստեղծվում հավասարակշռել հասարակության, պետության, դատապարտյալի ընտանիքի և, ինչու չէ, նաև դատապարտյալի շահերը: Վերջապես անհրաժեշտ է նշել, որ անհնար է անձի նկատմամբ նշանակել այնպիսի պատժի տեսակ, որում կբացակայեն ուղղման տարրերը:

Որպես ուղղման նպատակի հիմնախնդիր իրավաբան գիտնականների կողմից քննարկվում է նաև քրեական օրենքում այդ նպատակի հասկացության նախատեսման հարցը, արդյունքում դրա բացակայությունը դիտարկվում է որպես օրենսդրի կողմից բացթողում: Այս մոտեցումը հիմնավորվում է այն հանգամանքով, որ միայն քրեակատարողական օրենքում այդ նպատակի նախատեսումն արդարացված չէ՝ հաշվի առնելով, որ պատժի բոլոր նպատակ-

ներն սկզբնապես ձևավորվում են քրեական օրենքում, ուստի արդարացված է դրանց բովանդակության բացահայտումը հենց քրեական օրենքում: Ավելին՝ քրեական և քրեակատարողական իրավունքների կարգավորման առարկաները տարբերվում են, իսկ ուղղման հասկացության սահմանումը այս կամ այն ճյուղային օրենքում նախատեսելը համապատասխանաբար նախանշում է պետության քաղաքականության առաջնահերթությունները տվյալ ոլորտում<sup>23</sup>:

Մ.Պ. Ժուրավյովը նշում է, որ հանցանք կատարած անձի ուղղման գործընթացը սկսվում է քրեական պատասխանատվության ենթարկելու պահից, սակայն այդ գործընթացի հիմնական փուլը պատժի նշանակման և իրականացման փուլն է<sup>24</sup>:

Այլ իրավաբան գիտնականներ նշում են, որ դատապարտյալի ուղղումը, որպես պատժի նպատակ, առաջնայնություն ունի պատժի մյուս նպատակների նկատմամբ: Մասնավորապես՝ Վ.Ի. Սելիվերստովան նշում է, որ դատապարտյալի ուղղումը, որպես պատժի նպատակ, առաջնային է պատժի մյուս նպատակների նկատմամբ, որոնք նախատեսված են քրեական օրենսգրքով<sup>25</sup>: Իսկ Ա.Ֆ. Միցկևիչը գտնում է, որ եթե այնուամենայնիվ դատապարտյալի ուղղումը համարենք առաջնային պատժի մյուս նպատակների նկատմամբ, ապա դա պայմանավորված է միայն նրա իրականացման բարդ կառուցակարգով, բայց ոչ պատժի նշանակման կարևորության հարցում<sup>26</sup>:

Գտնում ենք, որ հիշյալ մոտեցումները քննադատելի են, քանի որ ցանկալի չէ հատուկ առաջնայնություն ընձեռել պատժի որևէ նպատակի: Այս առումով, կհամաձայնենք Բ.Ս. Վոլկովի հետ, որը նշում է. «Դատապարտյալի ուղղման պատժի նպատակը չի կարող հակադրվել պատժի այլ նպատակների հետ, քանի որ նրանք խիստ կապված են միմյանց հետ:

<sup>22</sup> St'u Шестаков Д.А. Российская уголовно-правовая политика под углом зрения исторической тенденции к смягчению репрессии // Правоведение. - С.-Пб.: Изд-во С.-Петербург. ун-та, № 4, 1998, с. 156.

<sup>23</sup> St'u Палий А.А. Сущность и цели наказания в российском уголовном праве и средства их достижения. Дис. ... канд. юрид. наук. - Ростов-на-Дону, 2001, с. 95.

<sup>24</sup> St'u Уголовное право. Общая и Особенная части: Учебник для вузов / Под общ. ред. М.П. Журавлева и С.И. Никулина. Изд. Норма, М.: 2011, с. 190.

<sup>25</sup> St'u Уголовное право. Общая часть: Учебник / Под общ. ред. В.И. Радченко. М., 2004, с. 306.

<sup>26</sup> St'u Мицкевич А.Ф. Уголовное наказание: понятие, цели и механизмы действия. Монография / - С.-Пб.: Юрид. центр Пресс, 2005, с. 132.

Այս հանգամանքն ունի մեծ կարևորություն՝ ինչպես պատժի նշանակման, այնպես էլ դրա իրականացման ժամանակ: Պատիժ նշանակելու ժամանակ դատարանը չի կարող ղեկավարվել բացառապես պատժի մեկ նպատակով, օրինակ՝ դատապարտյալի ուղղման նպատակով, այլ պետք է ուշադրություն դարձնի նաև պատժի մյուս նպատակներին: Միայն պատժի բոլոր նպատակների համակցությամբ է հնարավոր պարզել, թե որքանով է անձի նկատմամբ նշանակված պատիժը արդարացի և հիմնավորված»<sup>27</sup>:

Կարծում ենք քննարկվող դիրքորոշումը քննադատելի է նաև քրեական օրենքի կարգավորումների համատեքստում, քանի որ օրենսդիրը, ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսելով պատժի նպատակները, նախապես դրանցից ոչ մեկին առաջնայնություն չի ընձեռել, որն ուղղակի ենթադրում է, որ բոլոր նպատակները հավասար են, ուստի որևէ նպատակ մյուսի նկատմամբ առաջնային չէ:

Այսպիսով անձի ուղղումը՝ որպես պատժի նպատակ, կարող է իրականացվել երկու ձևով: Առաջինը դրսևորվում է դատապարտյալի մոտ քրեածին ուղղվածությունների չեզոքացմամբ և քրեածին վարքագծի կողմնորոշումների բացառմամբ, որի արդյունքում դատապարտյալը օրենքով սահմանված կարգով պատժի կրման ավարտից հետո զերծ կմնա նոր հանցագործություններ կատարելուց: Երկրորդը դրսևորվում է դատապարտյալի անձի հատկանիշների բարելավմամբ (բարոյական վերադաստիարակում), երբ նա գիտակցաբար և վերջնականապես հրաժարվում է ոչ միայն նախկինում ունեցած քրեածին վարքագծից և կողմնորոշումներից, այլ քրեածին աշխարհայացքից, համոզմունքներից և տեսակետներից: Գտնում ենք, որ վերջին ազդեցությանը հասնելը հնարավոր է բացառիկ դեպքերում, որը ներկայիս պայմաններում պատժի իրականացման արդյունքում գրեթե անհասանելի է:

Ուղղման նպատակին հասնելն իրագործվում է դատարանի կողմից նշանակված պատ-

ժի իրականացման արդյունքում՝ դատապարտյալի նկատմամբ պատժի կիրառման (փորձաշրջանի) ընթացքում: Իհարկե դատապարտյալի ուղղման կարևոր հանգամանքներից է, երբ պատիժ կրելու ավարտից հետո անձը զերծ է մնում նոր հանցագործություններ կատարելուց:

Անհրաժեշտ է նշել, որ այդ վերջնական ցանկալի արդյունքին հասնելու համար հսկայական ներդրում իրենց հերթին ունեն քրեակատարողական հիմնարկների համապատասխան աշխատակիցները պատժի կրման ընթացքում: Այդ ժամանակահատվածում դատապարտյալի նկատմամբ կիրառվում են քրեակատարողական օրենսգրքով նախատեսված ուղղման միջոցներ: Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատապարտյալի ուղղման հիմնական միջոցներն են պատիժները կատարելու և կրելու սահմանված կարգն ու պայմանները, դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները, դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը: Ուղղման միջոցների առանձին տեսակներ անչափահասների համար կրում են պարտադիր բնույթ:

Այսպես, հիշյալ իրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ դատապարտյալի ուղղման համար կիրառվում են ուղղման հետևյալ հիմնական միջոցները.

1. պատիժները կատարելու և կրելու սահմանված կարգն ու պայմանները,
2. դատապարտյալի հետ տարվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները,
3. դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը,
4. հասարակական ներգործությունը:

Դատապարտյալի ուղղման առաջին հիմնական միջոցը պատիժների կատարման և

<sup>27</sup> St' u Волков Б.С. Цели наказания и их реализация в процессе правоприменения // Пять лет действия УК РФ: итоги и перспективы. Материалы 11-ой Международной научно-практической конференции, состоявшейся на юридическом факультете МГУ им. М.В. Ломоносова 30 - 31 мая 2002 г. - М.: ЛексЭст, 2003, с. 274.

կրելու սահմանված կարգն ու պայմանները (ռե-  
ժիմը), իրավական հասկացություն է, որի մի-  
ջոցով ապահովվում է ազատագրկման հետ  
կապ ունեցող պատժատեսակների իրականա-  
ցումը:

Դատապարտյալների հետ սոցիալական,  
հոգեբանական և իրավական աշխատանքնե-  
րը ևս ընդգրկվում են ուղղման հիմնական մի-  
ջոցների շարքում, որոնք իրականացվում են  
ՀՀ արդարդատության նախարարի 2008 թվա-  
կանի մայիսի 30-ի «Կալանավորվածների և  
դատապարտյալների հետ սոցիալական, հոգե-  
բանական և իրավական աշխատանքներ իրա-  
կանացնող կառուցվածքային ստորաբաժանում-  
ների գործունեության կարգը հաստատելու մա-  
սին» թիվ 44-Ն հրամանով: Նշված հրամանի  
3-րդ կետում սահմանված է, որ քրեակատար-  
ողական ծառայության սոցիալական, հոգեբա-  
նական, և իրավական աշխատանքներ իրա-  
կանացնող ստորաբաժանումների նպատակը  
Հայաստանի Հանրապետության արդարադա-  
տության նախարարության քրեակատարողա-  
կան հիմնարկներում պահվող կալանավորված  
անձանց և դատապարտյալների սոցիալական  
վերականգնումը և դատապարտյալների ուղղմա-  
նը նպաստելն է:

Նույն հրամանի 4-րդ կետում սահմանված  
են ստորաբաժանումների կողմից իրականաց-  
վող սոցիալական, հոգեբանական և իրավա-  
կան աշխատանքների մի շարք խնդիրներ, ո-  
րոնք են՝ 1) կալանավորվածների և դատա-  
պարտյալների արտաքին աշխարհի հետ սո-  
ցիալապես օգտակար կապեր և շփումներ ստեղ-  
ծելը, պահպանելը և զարգացնելը, 2) կալանա-  
վորվածների և դատապարտյալների հոգեկան  
առողջությունը պահպանելը և ամրապնդելը,  
3) կալանավորվածների և դատապարտյալնե-  
րի սոցիալական, հոգեբանական և իրավական  
պաշտպանվածությանը նպաստելը, 4) կալա-  
նավորվածների և դատապարտյալների աշխա-  
տանքային, կրթական, մշակութային, մարզա-  
կան, ստեղծագործական գործունեության զար-  
գացմանը նպաստելը, 5) կալանավորվածների  
և դատապարտյալների հոգևոր պահանջունք-  
ների բավարարմանը նպաստելը, 6) կալանա-  
վորվածների և դատապարտյալների օրինա-  
պահ վարքագծի դրսևորմանը, իրավագիտակ-  
ցության բարձրացմանը նպաստելը, 7) կալա-

նավորվածների և դատապարտյալների մոտ,  
հասարակության համակեցության կանոնների  
և ավանդույթների նկատմամբ հարգալից վե-  
րաբերմունքի ձևավորմանը նպաստելը, 8) դա-  
տապարտյալների սոցիալական վերականգն-  
ման և պատժից պայմանական վաղաժամկետ  
ազատման համար պայմաններ ստեղծելը, 9)  
դատապարտյալների հասարակություն վերաին-  
տեգրվելուն նպաստելը:

Անդրադառնալով ուղղման երրորդ միջո-  
ցին՝ անհրաժեշտ է նշել, որ ՀՀ արդարադա-  
տության նախարարի հիշյալ հրամանի 5-րդ  
կետով սահմանվում է, որ սոցիալական, հոգե-  
բանական և իրավական աշխատանքները սո-  
ցիալական, հոգեբանական և իրավական մաս-  
նագիտական աշխատանքների, ինչպես նաև  
կրթական, մշակութային, մարզական և հոգևոր-  
կրոնական բնույթի միջոցառումների համալիր  
իրականացումն է: Այսպիսով, անհրաժեշտ է  
արձանագրել, որ կրթական, մշակութային, մար-  
զական և հոգևոր-կրոնական բնույթի միջոցա-  
ռումների իրականացումը դիտվում է որպես  
սոցիալական, հոգեբանական և իրավական  
աշխատանքների անբաժանելի մաս, որի իրա-  
կանացման կարգը նախատեսված է ՀՀ ար-  
դարադատության նախարարի հիշյալ հրամա-  
նով:

Վերջապես հասարակական ներգործու-  
թյունը, որպես ուղղման հիմնական միջոց, ուղղ-  
ված է դատապարտյալների համար սոցիալա-  
կան օգտակար կապեր ստեղծելուն կամ վերա-  
կանգնելուն, հասարակական կյանքի հմտու-  
թյուններ ուսուցանելուն: Այդ միջոցը ևս ունի  
մեծ դաստիարակչական նշանակություն:

Հասարակական ներգործությունը կարող  
է դրսևորվել կազմակերպ-իրավական տար-  
բեր ձևերով, տեսակներով, միջոցներով, իսկ  
քրեակատարողական օրենսդրությունը չի նա-  
խատեսում այդ միջոցների սահմանափակում-  
ներ դատապարտյալների հետ տարվող աշխա-  
տանքների հարցում: Այն իրավական հարաբե-  
րությունները, որոնք առաջանում են հասարա-  
կական ներգործության միջոցի գործադրման  
հետևանքով, կարող են կարգավորվել տար-  
բեր իրավական ակտերով: Այս առումով անհրա-  
ժեշտ է համաձայնել Վ.Վ. Պոպովի այն կարծի-  
քի հետ, որ «հասարակական ներգործության  
տարրերը այս կամ այն մասով առկա են դա-

տապարտյալների ուղղման առանց բացառության բոլոր միջոցներում»<sup>28</sup>:

Ներկայումս քրեակատարողական համակարգում հասարակական ներգործության միջոցն ունի բավական լայն կիրառում:

Հասարակական ներգործության առանձին տեսակ է հասարակական վերահսկողությունը: Հասարակական կազմակերպությունները կարող են աջակցել պատիժներ կատարող հիմնարկների ու մարմինների աշխատանքներին, այդ թվում, դատապարտյալների ուղղման կապակցությամբ:

«Հ քրեակատարողական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատիժները կատարելու նկատմամբ հասարակական վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ պետական կառավարման լիազորված մարմին) կազմավորած հասարակական դիտորդների խմբի միջոցով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատիժները կատարելու նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացման կարգը, ինչպես նաև հասարակական դիտորդների խմբի կազմը և իրավասությունը սահմանվում է, որ պատիժները կատարելու նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացման կարգը, ինչպես նաև հասարակական դիտորդների խմբի կազմը և իրավասությունը սահմանում է պետական կառավարման լիազորված մարմինը:

«Հ արդարադատության նախարարի 2005 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողության իրականացման կարգը և հասարակական դիտորդների խմբի կազմը սահմանելու մասին» թիվ ՔՀ-66-Ն հրամանի 2-րդ կետում սահմանված են խմբի գործունեության նպա-

տակները. 1) ազատագրվածների և քրեակատարողական մարմինների հսկողության տակ գտնվող անձանց իրավունքների պաշտպանության հասարակական վերահսկումը, ազատագրվածների աշխատանքային և կենցաղային պայմանների բարելավումը, հասարակությանը քրեակատարողական ծառայության հիմնախնդիրները ներկայացնելը, 2) մարդու իրավունքների խախտումների բացահայտմանը և կանխարգելմանն ուղղված գործունեություն ծավալելը, 3) քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում իրավիճակի վերլուծությունների, եզրակացությունների և առաջարկությունների՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը և հասարակությանը ներկայացնելը, 4) քրեակատարողական օրենսդրությունն ուսումնասիրելը, անհրաժեշտության դեպքում՝ դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր իրավական ակտեր մշակելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

Այսպիսով, ամփոփելով դատապարտյալների ուղղման համար նախատեսված հիմնական միջոցների նշանակությունը, կարող ենք արձանագրել, որ այդ միջոցների առկայությունը և դրանց իրականացումն անհրաժեշտ են, քանի որ դատապարտյալը պատժի կրման ընթացքում ձեռք է բերում կամ զարգացնում է հասարակական կարևորություն ներկայացնող այնպիսի հմտություններ, որոնք պատժի կրման ավարտից հետո կարող են նպաստել դատապարտյալի, որպես անձի, հաջող վերասոցիալականացմանը: Այս առումով, ցանկալի է ընդգծել, որ ներկայումս ՀՀ-ում իրականացվող իրավական և դատական բարեփոխումներից անմասն չէ քրեակատարողական համակարգը,<sup>29</sup> որի նպատակն ուղղված է այդ համակարգի համապատասխանեցմանը միջազգային հայտնի փաստաթղթերին և առաջադեմ երկրների փորձին:

<sup>28</sup> St' u Попов В.В. Актуальные вопросы научного и научно-методического обеспечения воспитательной работы с осужденными // Состояние и перспективы научного обеспечения организации воспитательной работы с осужденными: Материалы науч.-практ. конф. – Вологда: Вологод. ин-т права и экономики Минюста России, 2001, с. 16.

<sup>29</sup> Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարի 2015 թվականի մարտի 11-ի թիվ 96-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային հանձնաժողով ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծի մշակման գործընթացն ապահովելու համար:



**ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ**

ՀՀ ոստիկանության Փորձաքրեագիտական վարչության բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, իրավագիտության թեկնածու

**ԲՆԱԿԱՐԱՆ, ՊԱՇՏՍԱՐԱՆ ԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԱՊՕՐԻՆԻ ՄՈՒՏՔ  
ԳՈՐԾԵԼՈՎ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇԱԿԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Բնակարան, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելը, որպես հափշտակության հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ, նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի գողության, կողոպուտի և ավազակության հանցակազմերում: Օրենսգրքում այդպիսի հատկանիշի առկայությունը պայմանավորված է նաև նրանով, որ նյութական արժեքներին հասանելի դառնալու և արգելքները հաղթահարելու նպատակով՝ հանցավորը ցուցաբերում է առանձնահատուկ հանդգնություն և գործադրում ջանքեր, որոնք ավելի են բարձրացնում արարքի հանրային վտանգավորությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը միակն է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համակարգում, որը հնարավորինս սպառնիչ սահմանում է «բնակարան» հասկացության տարրերը: Օրենսգրքում տրված սահմանումը համապատասխանում է նաև միջազգային իրավունքին հայտնի «բնակարան» հասկացության սահմանադրաիրավական նշանակությանը: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, բացի բնակելի տնից, բնակարան է համարում փաստաբանական գրասենյակը, ելնելով այն դիրքորոշումից, որ պրոֆեսիոնալ և գործարար գործունեությամբ հաջողությամբ հնարավոր է զբաղվել նաև սեփական բնակարանում: Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ պրոֆեսիոնալ բնագավառին չառնչվող գործունեությամբ կարելի է զբաղվել գրասենյակում կամ առևտրային ծառայողական շենքում, հետևաբար՝ դրանք նույնպես մտնում են «բնակարան» հասկացության մեջ: Եվրոպական դա-

տարանը «բնակարան» է համարում ոչ միայն ծառայողական աշխատասենյակը, այլև՝ քաղաքացիներին պատկանող տրանսպորտային միջոցները, կազմակերպությունների շենքերը, այդ թվում առևտրային շինությունները, շտաբ-բնակարանները, տեղական ներկայացուցչությունների շենքերը և այլն: Հողամասը, որտեղ պետք է իրականացվի բնակելի տան շինարարություն, Եվրոպական դատարանը բնակարան չի համարում:

Այսպիսով, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 46-րդ կետի՝ «բնակարան» է համարվում այն շենքը կամ շինությունը, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է որոշակի անձի կամ անձանց բնակության համար, այդ թվում՝ սեփական կամ վարձակալած բնակարանը, այգետնակը, հյուրանոցային համարը, նավախցիկը, գնացքի ճամփորդախցիկը, համապատասխանաբար դրանց անմիջական հարող ծածկապատշամբները, սանդղավանդակները, վերնասրահները, պատշամբները, ընդհանուր օգտագործման տարածքը, ինչպես նաև դրանց այլ բաղադրիչ մասերը, որոնք օգտագործվում են հանգստի, գույքը պահելու, ինչպես նաև որոշակի անձի կամ անձանց այլ պահանջմունքները բավարարելու համար, բնակելի շինության նկուղը և ձեղնահարկը: «Բնակարան» հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև մասնավոր ավտոմեքենան, գետային կամ ծովային նավը, ինչպես նաև ծառայողական անձնական աշխատասենյակը և ավտոմեքենան, արվեստանոցը:

Բնակարան չեն կարող համարվել այն շինությունները, որոնք մշտական կամ ժամանա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

կավոր՝ նախատեսված և (կամ) հարմարեցված չեն մարդկանց բնակության համար (բնակարանից հեռու գտնվող գետնափորը, անգարը, վրանը, ավտոտնակը և այլ տնտեսական նպատակով պատրաստված շինությունը)<sup>2</sup>: Օրինակ՝ իրավաբանական գրականության մեջ արդարացի քննադատության է արժանացել այն մտտեցումը, ըստ որի՝ գնացքի ճամփորդախցիկը (ուղևորախուցը) չի կարող համարվել ժամանակավոր օգտագործվող բնակելի տարածք, իսկ այնտեղից կատարված հափշտակությունը՝ ապօրինի բնակարան մուտք գործելով կատարված գողություն, քանի որ գնացքը, ծառայելով որպես փոխադրամիջոց, չի կարող նախատեսված լինել մարդկանց բնակության համար<sup>3</sup>:

Հարկ է նկատել, որ քրեաիրավական տեսանկյունից ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 46-րդ կետում սահմանված «բնակարան» հասկացության էությունն ամբողջությամբ և մեխանիկորեն ընդունելը, ճիշտ չէ և տվյալ հարցին պետք է մոտենալ որոշակի վերապահումներով: Այստեղ անհրաժեշտ են այլ ավելի հստակ և գործնական մոտեցումներ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ՀՀ քր. դատ. օր.-ում «բնակարան» հասկացության մեջ ներառված այնպիսի հասկացությունների կիրառմանը, ինչպիսիք են՝ «մասնավոր ավտոմեքենա», «գետային կամ ծովային նավ», «ծառայողական անձնական աշխատասենյակ, ավտոմեքենա, արվեստանոց», «ընդհանուր օգտագործման տարածք» և այլն, որոնց առկայությունն, ըստ էության, անհիմն կերպով ընդլայնում է «բնակարան» հասկացության բովանդակային էությունը և ստեղծում լրացուցիչ բարդություններ՝ հանցագործությունների որակման հարցում:

Ընդհանրապես, «բնակարան» հասկացության հետ կապված հարցերի քրեաիրավական պարզաբանման համար, հավանաբար, ավելի նպատակահարմար կլիներ, եթե օրենսդիրը, որպես ելակետ, հիմք ընդուներ անձի կողմից որևէ տեղանքում, շենքում կամ շինությունում մշտապես կամ ժամանակավորապես *փաստացի բնակվելու հանգամանք*: Իսկ այն հանգամանքը, թե տվյալ տեղանքը, շենքը, շինությունը կամ տրանսպորտային միջոցը ինչպիսի հնարավորություններ ունեն անձի բնակության և կենսական պայմաններն ապահովելու համար, կամ ինչ նպատակների են դրանք ծառայում, էական չէ: Կարևորն այն է, որ անձի կողմից այն մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվի որպես բնակության համար պիտանի տարածք, այսինքն՝ տարածք, ուր անձը, գոնե նվազագույնը, կարող է ապահովել իր կենսագործունեության պայմանները: Ինչպես կարծում է հեղինակներից Բ.Գ. Զավիդովը, զուտ բնակարանային ֆոնդի մեջ չմտնող, սակայն ժամանակավորապես բնակության համար նախատեսված տարածքները կամ շինությունները «բնակարան» հասկացության մեջ ներառելը՝ տվյալ հասկացությունն առավել տարածական մեկանաբանելու հնարավորություն են ընձեռում<sup>4</sup>, ինչը, իրավական որոշակիության սկզբունքի<sup>5</sup> իմաստով, դատական պրակտիկայում կարող է առաջ բերել որոշակի խնդիրներ:

«Բնակարան» հասկացության էությունը բացահայտող որոշակի տարրեր են պարունակում նաև ՀՀ քաղաքաշինության նախարարության և կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության 1998 թվականի մայիսի 26-ի «Հա-

<sup>1</sup> Ст'я Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, под общей редакцией док. юрид. наук, Председателя Верховного Суда РФ В.М. Лебедева и док. юрид. наук, профессора Ю.И. Скуратова, М., издательство НОРМА, 2002г., с. 384, Гаухман Л.Д., Максимов С.В. Ответственность за преступления против собственности, М., 2001г., с. 56 и др.

<sup>2</sup> Տես Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, խմբ.՝ իրավ. գիտ. դոկ., պրոֆ. Գ.Ս. Ղազինյանի, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2004թ., էջ 342:

<sup>3</sup> Տես Курс уголовного права, в пяти томах, особенная часть, том 3, под редакцией док. юрид. наук, профессора Г.Н. Борзенкова и док. юрид. наук, профессора В.С. Комиссарова, М., Зерцало-М, 2002г., с. 429-430.

<sup>4</sup> Տես Завидов Б.Д. Кража, уголовно-правовой анализ, практическое пособие, М., 2002г., с. 22.

<sup>5</sup> Տես ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ.-ի թիվ ՍԴՈ-630 որոշումը: Նշված որոշումը հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշման վրա, համաձայն որի որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը:

յաստանի Հանրապետության փարածքում ըստ նպատակային նշանակության շենքերի և շինությունների դասակարգումը» թիվ 108-Կ համատեղ հրամանում առկա դրույթները, որի համաձայն՝

- բնակելի են համարվում մարդկանց բնակության համար նախատեսված շինությունները, բաղկացած բնակելի և օժանդակ մասերից, օժտված կոմունալ հարմարություններով.
- բնակարան է համարվում շենքում գտնվող առանձին տարածքը՝ բաղկացած բնակելի և օժանդակ մասերից, օժտված կոմունալ հարմարություններով.
- բնակելի տուն է համարվում բնակավայրի տարածքում առանձին հողամասի վրա կառուցված, առանձին փոստային համար ունեցող, բնակելի, օժանդակ և կոմունալ հարմարություններով, իր տնտեսական շինություններով կառույցը.
- շինություն է համարվում բնական կամ արհեստական նյութերից, երկրի վրա, ստորերկրյա կամ վերերկրյա կառուցված ծավալային, հարթային կամ գծային շինարարական համակարգը՝ կազմված կրող, որոշ դեպքերում նաև պարփակող կոնստրուկցիաներից և նախատեսված բնակվելու, տարբեր տեսակի արտադրական ու այլ աշխատանքային պրոցեսների կատարման, նյութերի, շինվածքների ու սարքավորումների տեղադրման կամ պահեստավորման, մարդկանց ու բեռների տեղափոխման, պաշտպանական և այլ նպատակների համար...»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տարատեսակ շինությունները «բնակարան» հասկացության տակ առբերելու հարցում միասնական չափորոշիչներ չի սահմանել, սակայն, այսպես թե այնպես, «բնակարան» հասկացությունը կապում է մարդու՝ տվյալ տա-

րածքը անձնական կյանքի, բնակության համար օգտագործելու մտադրության հետ<sup>6</sup>: Շենքը կամ շինությունը բնակարան համարելու հիմնական «պայմանը»՝ մշտապես կամ ժամանակավորապես բնակության համար օգտագործելու հանգամանքը, ևս իր դրսևորումն է ստացել վերոհիշյալ դատավարական նորմում: «Բնակություն» հասկացության մեկնաբանման համար կարևոր են տվյալ տարածքը քնի և հանգստի համար օգտագործելու, հետևաբար տարածքում անկողնու առկայության հանգամանքները: Հնարավոր է նաև «բնակություն» այլ՝ մարդու ողջ կենսագործունեությունը (քունը, հանգիստը, սննդի պատրաստումը, աշխատանքը) ընդգրկող մեկնաբանություն, որի դեպքում առաջնային դեր է ստանում մարդու մեկուսանալու կամ առանձնանալու հնարավորությունը: Նման մեկնաբանության դեպքում սահմանադրական նորմը ոչ միայն պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց, այլև մասնավոր անձանց պարտավորեցնում է ձեռնպահ մնալ բնակարանի անձեռնմխելիության խախտումներից<sup>7</sup>:

Հեղինակներից՝ Ս.Մ. Կոչոյը կարծում է, որ արդարացի կլիներ, եթե արարքը որակյալ դարձնող այնպիսի հատկանիշների կիրառությունը, ինչպիսիք են բնակարան, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելը, գողության, կողոպուտի և ավազակության հանցակազմերից ընդհանրապես բացառվելին: Նշված մոտեցման հիմնական պատճառը հափշտակությունների որակման հարցերում հաճախ հանդիպող անձի դիտավորության ապացուցման դժվարությունն է: Նրա կարծիքով, եթե կատարվել է հափշտակություն ապօրինի բնակարան մուտք գործելով, ապա տվյալ արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ, այն է՝ կոնկրետ հափշտակության (գողության, կողոպուտի և ավազակության) և բնակարանի անձեռնմխելիության համար պատասխանատվություն նախատեսող հոդվածներով<sup>8</sup>: Սակայն՝ նշված տեսակետի առնչությամբ պետք է նկատել, որ արարքների

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

<sup>6</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի), Երևան, «Իրավունք», 2010թ., էջ 287:  
<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը՝ էջ 287- 288:  
<sup>8</sup> Տե՛ս Кочой С.М. Ответственность за корыстные преступления против собственности, учебно-практическое пособие, издание 2-е, дополненное и переработанное, М., 2000г., с. 154-156.

այդպիսի քրեաիրավական որակումները հաիշտակությունների համար օրենքով նախատեսված պատասխանատվության տեսանկյունից, ամբողջությամբ ընդունելի չեն, քանի որ այն կարող է առաջ բերել օրենքով նախատեսված պատասխանատվության անհարկի խստացման:

Մի շարք արտասահմանյան երկրների քրեադատավարական օրենսդրությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տվյալ երկրներում «բնակարան» հասկացության ընկալումը նույնպես միանշանակ չէ: Մասնավորապես՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական դատավարության օրենսդրությունը «բնակարան» հասկացության տակ ընկալում է՝ հանրային միջավայրից սահմանազատված և հանրության համար ոչ հասանելի համարվող՝ մասնավոր կյանքի ու գործունեության համար նախատեսված շինությունը: Ավտոմեքենաների սրահները, պատիժն իրականացնող հաստատությունների խուցերը կամ տեսակցության սենյակները՝ նշված հասկացության մեջ չեն ներառվում<sup>9</sup>: Մեկ այլ դեպքում՝ Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրության 7-րդ հոդվածի 49-րդ կետը, «բնակարան» հասկացության մեջ ներառելով նաև բնակելի շինության նկուղն ու ձեղնահարկը՝ այն չի տարածում բազմաբնակարանային համարվող շինությունների վերը նշված տարածքների վրա:

Ի վերջո, ինչպես կարելի է հիմնավորել այն հանգամանքը, որ անձի ծառայողական անձնական աշխատասենյակից, ավտոմեքենայից, արվեստանոցից, գետային կամ ծովային նավից կատարված գողությունը որակվի իբրև «բնակարան»-ից կատարված, եթե անձն այնտեղ ոչ միայն չի բնակվում, այլ նաև տվյալ հասկացության իմաստը, զուտ տարածքի նպատակային (գործառնական) օգտագործման իմաստով, դուրս է գտնվում վերջինիս իրական նշանակության շրջանակներից: Այն քաղաքացիաիրավական տեսանկյունից նույնպես ընդունելի չէ: Ինչպես նշված է ՀՀ քաղ. օր.-ի 222-րդ հոդվածում՝ «*Բնակարանը բնակության համար նախատեսված և իրավունքների պետա-*

*կան գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված կամ համարակալված տարածքն (շինությունն) է... Բնակարանը պետք է օգտագործվի միայն դրա գործառնական նշանակությանը<sup>10</sup> համապատասխան...»:*

Ի մի բերելով «բնակարան» հասկացության վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները, միանշանակ կարելի է փաստել, որ այն, քրեաիրավական իմաստով, դեռևս որոշակի հստակեցման և պարզեցման կարիք ունի: Այդպիսի մոտեցումը, օրենքի կիրառման տեսանկյունից, կարող է նպաստել ոչ միայն նշված հասկացության միատեսակ և ճիշտ ընկալմանը, այլ դատական պրակտիկայում հանդիպող սխալների նվազմանը և հանցագործությունների ճիշտ որակմանը:

Հետևաբար, «**բնակարան**» հասկացության համար՝ քրեաիրավական (քրեադատավարական) իմաստով, կարող է բավարարող համարվել հետևյալ սահմանումը.

*«Սույն օրենսգրքով նախատեսված հողվածներում, բնակարան է համարվում փաստացի բնակության համար նախատեսված որոշակի անձի կամ անձանց կողմից մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվող բնակելի տարածքը (որպես այդպիսիք կարող են հանդես գալ նաև՝ բնակարանային ֆոնդի մեջ չմտնող տարածքները կամ շինությունները)»:*

Հեղինակներից Ա.Ի. Բոյցովը, առանձնացնելով միմյանց փոխլրացնող երկու հատկանիշներ, կարծում է, որ դրանց համակցության առկայությունն է, որ կարող է ձևավորել բնակարան, պահեստարան կամ այլ շինություն հասկացությունների էությունը: Հատկանիշներից առաջինը՝ դրանց գործառնական նշանակությունն է, մասնավորապես՝ բնակարանի համար՝ բնակության, շինության համար՝ մարդկանց և նյութական արժեքների տեղակայման, իսկ պահեստարանի համար՝ նյութական արժեքների պահպանման համար նախատեսված լինելու, փաստացի նշանակությունը: Երկրորդ հատկանիշը՝ նշված օբյեկտների այս կամ այլ կերպ ունեցած պաշտպանվածությունն է. բնա-

<sup>9</sup> Stü Головенков П., Спица Н., Хелльманн У. Уголовно-процессуальный кодекс Федеративной Республики Германия (Strafprozessordnung), научно-практический комментарий и перевод текста закона, Потсдам / Берлин, 2012, с. 159.

<sup>10</sup> Stü «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02.02.2002թ. №88 որոշումը:

կարանի դեպքում՝ իրավական անձեռնմխելիության, իսկ պահեստարանի դեպքում՝ տեխնիկական կամ այլ միջոցների միջամտությունից ունեցած պաշտպանվածության: Նշված հասկացությունների պարզաբանման շրջանակներում իր հատուկ կարևորությունն է ստանում նաև «մուտք գործել» հասկացությունը, որը բխում է վերը նշված օբյեկտների ունեցած հատուկ իրավական պաշտպանվածությունից<sup>11</sup>: Այսինքն՝ գողության, կողոպուտի և ավազակության հանցակազմերում մուտք գործելու հատկանիշի առկայությունը հիմնավորելու նպատակով, նախևառաջ անհրաժեշտ է պարզել, թե հանցավորն ինչ նպատակով է գույքը պահպանող տարածք մուտք գործել, այնուհետև՝ երբ է վերջինիս մոտ այն տիրանալու մտադրությունն առաջացել<sup>12</sup>:

Դատարանը և վարույթն իրականացնող համապատասխան մարմինները, պետք է նաև նկատի ունենան, որ գողություն, կողոպուտ կամ ավազակություն կատարելու նպատակով բնակարան, պահեստարան կամ այլ շինություն ապօրինի մուտք գործելը կատարվել է սեփականատիրոջ կամքին հակառակ: Այն կարող է իրականացվել ոչ միայն գաղտնի, այլ՝ բացահայտ, ինչպես արգելքները կամ մարդկանց դիմադրությունը հաղթահարելով (այդ թվում՝ պահպանություն իրականացնող աշխատակիցների), այնպես էլ՝ անարգել: Մուտք գործել պետք է համարել նաև անձի կողմից շինությունում հայտնվելը խաբեության, այդ թվում նաև կեղծ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով, օրինակ՝ սպասարկող անձնակազմի, վարչական կամ փոստային մարմինների աշխատակցի, կամ այլ անձանց անվան տակ: Մուտք գործել կարելի է նաև որոշակի հարմարանքներ օգտագործելու միջոցով, երբ հանցավորը հափշտակված իրերը համապատասխան շինությունից դուրս է բերում առանց այնտեղ մուտք գործելու<sup>13</sup>:

«Վճռաբեկ դատարանի կողմից ընդուն-

ված նախադեպային որոշումներից մեկի համաձայն՝ «...Հանցավորի կամքից անկախ հանգամանքներով ընդհատված այն գործողությունները, որոնք, ստեղծելով իրական վտանգ ուրիշի գույքին վնաս պատճառելու համար, անմիջական ներգործությամբ կոտնձգեն ուրիշի գույք հանդիսացող սեփականության դեմ կամ կնախորդեն ուրիշի գույքը վերցնելուն և հանցավորինը կամ այլ անձինը դարձնելուն և կհանդիսանան տվյալ արարքների բաղկացուցիչ մասը (օրինակ՝ պահեստարան, շինություն կամ բնակարան ապօրինի մուտք գործելու եղանակով կատարված գողության օբյեկտի կողմը սկսված է համարվում այն պահից, երբ հանցավորի կողմից կխախտվեն փականների ամբողջականությունը, կկիրառվեն նախօրոք հարմարեցված բանալիները, կօգտագործվի գույքը փրկապետրոդի անուշադրությունը և այլն), պետք է որակվեն որպես գողության փորձ, իսկ այն գործողությունները, որոնք կսահմանափակվեն միայն գողության կատարման համար որոշակի պայմաններ ստեղծելով կամ չեն հանդիսանա ուրիշի գույքը վերցնելու և հանցավորինը կամ այլ անձինը դարձնելու արարքի բաղկացուցիչ մաս և դրան նախորդող, պետք է որակվեն որպես գողության նախապատրաստություն»<sup>14</sup>:

Ըստ էության, մուտք գործելը չի դիտվում որպես ինքնանպատակ գործողություն, այլ համարվում է որպես պահպանվող գույքին հասանելի լինելու միջոց: Այդ իսկ պատճառով, բնակարան, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելը միշտ զուգորդված է լինում ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ: Եթե հանցավորը բնակարան է մուտք գործել այլ նպատակներով կամ մտադրություններով, իսկ նյութական արժեքները գաղտնի կամ բացահայտ հափշտակելու դիտավորությունը վերջինիս մոտ ի հայտ է եկել նշված գործողություններից անմիջապես հետո, ապա արարքում վերը նշված հատկանիշի առկայությունը բա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

<sup>11</sup> Տե՛ս Бойцов А.И. Преступления против собственности, теория и практика уголовного права и уголовного процесса, Санкт-Петербург, Юридический центр Пресс, 2002г., с. 628.  
<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը՝ էջ 636:  
<sup>13</sup> Տե՛ս Комментарии к Уголовному кодексу Российской Федерации, 6-е издание, под редакцией заслуженного деятеля науки РФ, док. юрид. наук, профессора В.Т. Томина, канд. юрид. наук, доцента В.В. Сверчкова, М., ЮРАЙТ, 2010г., с. 525.  
<sup>14</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 13.09.2013թ. որոշումը (թիվ ԵԿԴ/0087/01/12 քր. գործ):

ցակայում է<sup>15</sup>: Հարկ է նշել, որ հենց այս հատկանիշն էր, որ դեռևս ՌՄՖՍՀ 1960թ. քր. օր.ում, փոխարինեց «տեխնիկական միջոցների գործադրմամբ կատարված գողություն» հասկացությանը: «Ապօրինի մուտք գործելը», որպես հասկացություն, ավելի էր կարևորվում, քան «տեխնիկական միջոցների գործադրում» հասկացությունը, քանի որ այն կարող է իրագործվել առանց այդպիսի միջոցներ գործադրելու:

Դատաքննչական պրակտիկայում երբեմն հնարավոր են դեպքեր, երբ ընդամենը մետաղալարերով ցանկապատված տարածքից կատարված գողությունը, որտեղ մուտք գործելը հանցավորի կողմից առանձնապես որևէ դժվարություն չի ներկայացնում, որակվի որպես պահեստարանից կատարված: Այլ հարց է, եթե նշված պահեստարանը լավ է պահպանվում, կառուցապատված է, ունի արգելապատնեշ, իսկ հանցավորի կողմից նշված տարածք մուտք գործելը կատարվում է համապատասխան տեխնիկական մեջոցների գործադրմամբ, միաժամանակ՝ որոշակի նյութական վնաս պատճառելով սեփականատիրոջը: Այս պարագայում, հանցավորի կատարած արարքի հանրային վտանգավորությունն ավելի մեծ է, քանի որ գույքը վերցնելու որոշակի հանգամանքներ կատարվում են տեխնիկական միջոցների գործադրմամբ: Երբ գույքը հափշտակելու ընթացքում հանցավորը գործադրում է այնպիսի տեխնիկական միջոցներ, որոնց առկայությունը ոչ միայն հեշտացնում է հափշտակության կատարումը, այլ նաև բարձրացնում կատարած գործողությունների հանրային վտանգավորությունը, ապա այդպիսի գործողությունների կատարման ընթացքում տուժողին հանդիպելը, կարող է նաև լրացուցիչ պատճառ հանդիսանալ վերջինիս կողմից հափշտակության եղանակը փոխելու առումով, օրինակ՝ որպես տեխնիկական միջոց հանդիսացող մետաղյա լինգի գործադրմամբ սկսված գողությունը կարող է վերաճել կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությամբ զուգորդված հափշտակության՝

ՀՀ վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշմամբ, անդրադառնալով օրենսդրության մեջ առկա որոշ խնդիրների՝ կապված հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու հանցագործության բացահայտման նպատակով քննարկվող ՕՀՄ-ի կատարման հնարավորության հետ, չի անդրադարձել ոչ պակաս կարևոր մեկ այլ հարցի, մասնավորապես, թե ՀՀ քրեական օրենսգրքի որ հոդվածների բացահայտման նպատակով կարող է կատարվել «կաշառք ստանալու կամ կաշառք տալու» նմանակում ՕՀՄ-ն:

Այլ կերպ ասած՝ արդյոք այն կարող է կատարվել ՀՀ քրեական օրենսգրքի 154<sup>2</sup>-րդ, 200-րդ, 201-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների բացահայտման նպատակով: Հարցի վիճահարույց լինելը կայանում է նրանում, որ, ի տարբերություն հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալուն, քննարկվող հանցակազմերում օրենսդիրն օգտագործել է «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները: Մասնավորապես ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է սահմանում առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողին, արբիտրին, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությանը համապատասխան՝ գործառույթներ իրականացնող արբիտրին, աուդիտորին կամ փաստաբանին կաշառք տալու համար, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց անձամբ կամ միջնորդի միջոցով նրանց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալու, կամ ա-

ռաջարկելու, կամ տրամադրելու համար՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու նպատակով: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 154<sup>2</sup>-րդ հոդվածով օրենսդիրը հանցագործություն է համարել թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանով թեկնածուներից անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք ստանալը:

Կ.Ժաժոյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում հնարավոր չէ միանշանակ պատասխան տալ քննարկվող հարցին, քանի որ չնայած մատնանշված հանցակազմերում օգտագործված են «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները, սակայն իրենց բովանդակությամբ էականորեն տարբերվում են ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ և 312-րդ հոդվածներում կիրառված հասկացություններից: Ասվածը հիմնավորելու համար բերենք ընդամենը մեկ ակնհայտ օրինակ. ՀՀ քրեական օրենսգրքի 154<sup>2</sup>-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործված «կաշառք ստանալ» հասկացության մեջ ընդգրկված է միայն կաշառքի առարկան կաշառք ստացողին փոխանցելը, քանի որ հոդվածի դիսպոզիցիայում հստակ նշված են այն գործողությունները, որոնց կատարման դիմաց տրվում է կաշառքը, այն է՝ թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ քվեարկելու, ընտրություններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրաժարվելու պայմանը: Այսինքն՝ կաշառք ստանալու հասկացության մեջ ներառված չէ դրա կատարման նպատակը, ինչպես նաև պահանջելը, ստանալու խոստումը և տալու առաջարկն ընդունելը:

Ի տարբերություն դրա՝ օրենսդիրը, ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 1-ին մասում սահմանելով «կաշառք ստանալու» հասկացությունը, դրա մեջ ներառել է նաև կատարման նպատակը, այն է՝ կաշառք տվողի կամ նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որևէ գործողություն կատարելը կամ չկատարելը, կամ իր պաշտոնական դիրքն օգտագործելով՝ այդպիսի գործողություն կա-

տարելուն կամ չկատարելուն նպաստելը, կամ ծառայության գծով հովանավորչությունը կամ թողնվությունը:

Ստացվում է, որ օրենսդիրը, չնայած օգտագործել է միևնույն եզրույթները, այն է՝ «կաշաք ստանալը» և «կաշառք տալը», սակայն տարբեր հանցակազմերում նկատի է ունեցել տարբեր իմաստներ, որն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համատեքստում անընդունելի է:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ և «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» ՕՀՄ-ի կատարման հնարավորությունը ոչ թե կապել «կաշառք ստանալու» կամ «կաշառք տալու», այլ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված կոնկրետ հանցագործությունների բացահայտման հետ: Այլ կերպ ասած՝ առաջարկում ենք ուղղակիորեն թվարկել այն բոլոր հանցակազմերը, որոնցով նախատեսված հանցագործությունների բացահայտման համար իրավաչափ կհամարվի կատարել քննարկվող ՕՀՄ-ն:

Դեռ ավելին, ուշադրություն դարձնենք, որ օրենսդիրը որևէ կերպ չի անդրադարձել կաշառքի միջնորդության բացահայտման նպատակով քննարկվող ՕՀՄ-ի կատարման հնարավորությանը:

Հարցի կարևորությունն առավել տեսանելի դարձնելու նպատակով վերլուծենք հետևյալ իրավիճակը և պարզենք կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում օպերատիվ-հետախուզական միջոցառման կատարման իրավաչափությունը:

Իրավիճակ 1. Պաշտոնատար անձ Ա.-ն, իր քարտուղարուհուց նախապես տեղեկանալով, որ իր հարևան Գ.-ն հանդիպում է նշանակել իր հետ և ցանկանում է օգնություն խնդրել իրենից՝ կապված իր պաշտոնական լիազորությունների կատարման հետ, հասկանում է, որ Գ.-ն պատրաստվում է կաշառք առաջարկել իրեն և որոշում է դրա մասին հայտնել իրավապահ մարմիններին և գրավոր հայտարարություն է տալիս: Իրավապահ մարմինները, օրենքով սահմանված կարգով, իրականացնելով «կաշառք ստանալու նմանակում» ՕՀՄ, կա-

շառքը փոխանցելու պահին ձերբակալում են Գ.-ին: Գործի քննության ընթացքում պարզվում է, որ Գ.-ի արարքում առկա են կաշառքի միջնորդության հատկանիշներ, քանի որ ոմն Դ.-ն գումար է տվել Գ.-ին և խնդրել գտնել պաշտոնատար անձ, որը կարող է լուծել իրեն հուզող խնդիրը:

Վերոնշյալ խնդրի տվյալներից բխում է, որ «կաշառք ստանալու նմանակում» ՕՀՄ-ն կատարվել է ոչ թե կաշառք տալու, այլ կաշառքի միջնորդության բացահայտման նպատակով, իհարկե, որպես հեռակա նպատակ ունենալով նաև կաշառք տվողին բացահայտելն ու քրեական պատասխանատվության ենթարկելը: Գտնում ենք, որ քննարկվող իրավիճակում կատարված ՕՀՄ-ն չի կարող համարվել իրավաչափ և դրա արդյունքները չեն կարող օգտագործվել որպես թույլատրելի ապացույց, քանի որ այն կատարվել է կաշառքի միջնորդության բացահայտման նպատակով, որպիսի հնարավորություն օրենսդիրը չի նախատեսել: Ստացվում է, որ դրա արդյունքները չեն կարող օգտագործվել Գ.-ի՝ միջնորդի մեղավորությունը հաստատելու նպատակով:

Բացի այդ, հարց է ծագում, թե արդյոք ներկայացված իրավիճակում կատարված ՕՀՄ-ի արդյունքները կարող են օգտագործվել Դ.-ի կողմից կաշառք տալու փաստի հաստատման նպատակով, թե ոչ, քանի որ օրենսդիրը նախատեսել է կաշառք տալու հանցագործության բացահայտման նպատակով դրա կատարման հնարավորությունը: Գտնում ենք, որ այս դեպքում ևս հարցի պատասխանը բացասական է հետևյալ պատճառաբանությամբ.

1. Կատարված ՕՀՄ-ի արդյունքում ուղղակիորեն հաստատվել է ոչ թե կաշառք տվողի, այլ կաշառքի միջնորդի կողմից կաշառքի փոխանցման փաստը: Կաշառք տալու փաստի հաստատման համար նախևառաջ անհրաժեշտ է ապացուցել կաշառք տվողի և կաշառքի միջնորդի միջև համաձայնության առկայությունը:

2. Բացի այդ, քննարկվող ՕՀՄ-ի արդյունքները չեն կարող օգտագործվել որպես թույլատրելի ապացույց կաշառք տվողի մեղավորության հաստատման նպատակով՝ «թունավոր ծառի պտուղները թունավոր են» կանոնից ելնելով: «Թունավոր ծառի պտուղները թունավոր են» տեսության համաձայն՝ օրենքի խախտ-

մամբ ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա ստացված ապացույցները նույնպես անթույլատրելի են: Նշված հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը Ա.Սարգսյանի վերաբերյալ որոշմամբ, որի համաձայն՝ օրենքի խախտմամբ կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում<sup>5</sup>:

Քննարկվող հարցի վերաբերյալ կարևոր նշանակություն ունի նաև Ժ.Սեֆիլյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը, որով հստակեցվեց «թունավոր ծառի պտուղները թունավոր են» տեսության որոշ չափանիշներ, մասնավորապես արձանագրվեց, որ անգամ անօրինական ճանապարհով ստացված տվյալի վրա ամբողջությամբ հիմնված (դրանից բխած) ապացույցն անթույլատրելի ճանաչելու համար անհրաժեշտ է, որ բացակայի ողջամիտ ջանքերով այդ ապացույցը ստանալու հնարավորությունը: Այլ կերպ՝ «բխելու» չափանիշի հետ մեկտեղ առկա է նաև «պատճառական կապի բացակայության» չափանիշը, որի էությունը հետևյալն է՝ ապացույցը կարող է ճանաչվել թույլատրելի, եթե պետությունը կարող էր ողջամիտ ջանքերով ձեռք բերել այդ տվյալը<sup>6</sup>:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում կարող ենք արձանագրել, որ «կաշառք ստանալու նմանակում» ՕՀՄ-ի արդյունքում ձեռք բերված փաստական տվյալը, այն է՝ կաշառքը փոխանցելու փաստը, չէր կարող հաստատվել այլ ճանապարհով: Ստացվում է, որ իրավապահ մարմինները զրկված էին տվյալ ապացույցը ողջամիտ ջանքերով ստանալու հնարավորությունից: Ուստի դրանից բխող ապացույցները պետք է ճանաչվեն անթույլատրելի:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ

սույն դեպքում կատարված ՕՀՄ-ի արդյունքները չեն կարող օգտագործվել որպես թույլատրելի ապացույց, դեռ ավելին՝ դրանից բխող մյուս ապացույցները ևս պետք է ճանաչվեն անթույլատրելի, ուստի չեն կարող դրվել ո՛չ կաշառք տվողի, ո՛չ կաշառքի միջնորդի մեղավորության հաստատման հիմքում:

Այժմ անդրադառնանք «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» ՕՀՄ-ի կատարման երկրորդ պայմանին, որի համաձայն գրավոր հայտարարությունը պետք է տրվի բացառապես կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկ ստացած անձի կողմից:

Նշված իրավակարգավորումների պայմաններում բարեխիղճ պաշտոնատար անձը որևէ կերպ չի կարող գրավոր հայտարարություն տալ իրավապահ մարմիններին՝ առանց ենթարկվելու քրեական պատասխանատվության:

Ընդգծենք, որ կաշառք ստանալու բարձր հանրային վտանգավորությամբ պայմանավորված՝ այժմ հանցագործության ավարտման պահը տեղափոխվել է ավելի վաղ փուլ՝ քրեական պատասխանատվություն նախատեսելով ոչ միայն կաշառքի առարկան փաստացի ստանալու համար, այլ նաև պահանջելու, ստանալու խոստման կամ առաջարկն ընդունելու պահից: Նշենք, որ վերոնշյալ իրավակարգավորումը սահմանվել է 2012 թվականի փետրվարի 9-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով, որի ընդունումը պայմանավորված էր Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններով և կաշառակերության դեմ արդյունավետ միջոցներով պայքարելու անհրաժեշտությամբ:

Բացի այդ, ի տարբերություն կաշառք տալու համար քրեական պատասխանատվություն սահմանող նորմի, կաշառք ստանալու դեպքում օրենսդիրը չի նախատեսել խրախուսական, այն է՝ հանցագործության մասին կամովին հայտնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն սահմանող նորմ: Արդյունքում ստեղծվում է փա-

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Ա.Սարգսյանի վերաբերյալ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի ԵՔԴ/0295/01/08 որոշում, կետ 15:

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Ժ.Սեֆիլյանի վերաբերյալ 2014 թվականի մայիսի 31-ի ՎԲ-07/13 որոշում, կետ 35:

կուղային իրավիճակ այն պաշտոնատար անձի համար, ով ցանկանում է բարեխղճորեն կատարել իր պարտականությունները և նպաստել կոռուպցիայի դեմ պայքարին, քանի որ մի դեպքում, երբ իրեն դեռևս չի առաջարկվել կաշառք, սակայն իրեն հաստատապես հայտնի է նման տեղեկատվությունը, նա չի կարող գրավոր հայտարարություն տալ և նպաստել հանցագործության կանխմանը, իսկ մյուս դեպքում, երբ ինքն ընդունել է կաշառք ստանալու առաջարկը, այսինքն՝ կաշառք ստանալու հանցագործությունն ավարտվել է, սակայն դիմել է իրավապահ մարմիններին՝ տալով գրավոր հայտարարություն, չի ազատվում քրեական պատասխանատվությունից՝ խրախուսական նորմի բացակայության պատճառով:

Գտնում ենք, որ նման իրավիճակն անընդունելի է և խոչընդոտում է կաշառակերության դեմ արդյունավետ պայքարի կազմակերպմանը, քանի որ օբյեկտիվորեն զրկում է իրավապահ մարմինների հետ համագործակցել ցանկացող պաշտոնատար անձանց գործելու ի շահ օրինականության: Ուստի առաջարկում ենք «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ և գրավոր հայտարարություն տալու հնարավորություն ընձեռել ոչ միայն կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկն ընդունած անձին, այլև այն անձանց, ում հաստատապես հայտնի է ապագայում իրենց նման առաջարկ անելու կոնկրետ դեպքի մասին:

Գործող իրավակարգավորումների պայմաններում առկա է մեկ այլ իրավական բաց ևս: Մասնավորապես, կաշառակերության շղթայի առանցքային մասնակից կաշառքի միջնորդը զրկված է գրավոր հայտարարություն տալու հնարավորությունից, որի հիման վրա իրավապահ մարմինները կարող են կատարել համապատասխան ՕՀՄ-ն, այն է՝ կաշառքի միջնորդության նմանակումը: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ կաշառքի միջնորդության նմանակման բացակայությունն օրենսդրական լուրջ բացթողում է, որը բացառում է կաշառքի միջնորդի և իրավապահ մարմնի համագործակցությունը:

Իրավական հարցն առավել տեսանելի ներկայացնելու համար բերենք հետևյալ օրինակը.

Իրավիճակ 2. Ա.-ն ցանկանում է ապօրինի ճանապարհով աշխատանքի ընդունվել և խնդրում է իր հարևան Բ.-ին օգնել իրեն այդ հարցում: Բ.-ն, ով պաշտոնատար անձ Գ.-ի հետ գտնվում էր բարիդրացիական հարաբերությունների մեջ, ստանձնում է միջնորդական առաքելություն: Սակայն իր համաձայնությունը տալուց հետո՝ Բ.-ն մտքափոխվում է և ցանկանում է դրա մասին հայտնել իրավապահ մարմիններին՝ հանցանք կատարած անձանց բռնելու և քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Մեջբերված խնդրում ներկայացված իրավիճակում Բ.-ն զրկված է իրավապահ մարմինների հետ համագործակցելու հնարավորությունից, քանի որ օրենսդիրը չի նախատեսել «Կաշառքի միջնորդության նմանակում» ՕՀՄ-ն: Ընդգծենք, որ քննարկվող ՕՀՄ-ի առկայության կարևորությունը կայանում է նրանում, որ այն ունի երկբևեռ ուղղվածություն. այն մի դեպքում ուղղված է կաշառք ստացողին, իսկ մյուս դեպքում՝ կաշառք տվողին բացահայտելուն:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ նույնիսկ այն դեպքում, երբ կաշառքի միջնորդը կաշառքի առարկան փոխանցում է պաշտոնատար անձին՝ կաշառք ստացողին, իրավաչափ չէ կատարել «կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառում, քանի որ կաշառքը փոխանցողը ոչ թե կաշառք տվողն է, այլ կաշառքի միջնորդը: ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Կ.Ժաժոյանի վերաբերյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում կաշառքի միջնորդի գրավոր հայտարարության հիման վրա կատարված «Կաշառք տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները ևս կճանաչվեն անթույլատրելի:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում նախատեսել «Կաշառքի միջնորդության նմանակում» ՕՀՄ-ի կատարման հնարավորությունը, որը կլուծի իրավակիրառ պրակտիկայում առկա բացը:

**ԿԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

«Հ գլխավոր դատախազի տեղակալի օգնական»

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Առևտրային հարաբերությունների բնականորեն իրականացման հիմնական պայմաններից մեկը նրա մասնակիցների արդյունավետ և բարեխիղճ աշխատանքն է: Այն դեպքում, երբ առևտրային հարաբերությունների սուբյեկտը չի կատարում կամ ի վիճակի չէ կատարելու իր ստանձնած պարտականությունները, նրան կատմամբ կիրառվում են օրենսդրությամբ նախատեսված ներգործության համապատասխան միջոցներ, որոնց մեջ առանձնահատուկ դեր է պատկանում սնանկացմանը: Սնանկացումը կիրառվում է անբարեխիղճ, իրենց պարտավորությունները պարբերաբար չկատարող, տնտեսվարման կանոնները խախտող գործարարների նկատմամբ, որոնք ճանաչվում են անվճարունակ, նրանց նկատմամբ կիրառվում են հատուկ միջոցներ՝ ընդհուպ սնանկ ճանաչելու միջոցով գործունեության դադարեցումը<sup>1</sup>:

Գործարար քաղաքացին իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կարող է ենթարկվել և գույքային պատասխանատվության, և՛ ճանաչվել սնանկ<sup>2</sup>:

Սնանկության ինստիտուտը ձևավորվել է վերջին տարիների ընթացքում տնտեսական և սոցիալական ոլորտում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում: Այս ինստիտուտը պահանջված է հասարակության կողմից, մասնավորապես, տնտեսվարող սուբյեկտների, ձեռնարկատիրական գործունեություն ծավալող անհատ քաղաքացիների շահերի պաշտպանության, ինչպես նաև երկրի տնտեսության առողջացման և զարգացման ռազմավարական ծրագրերի, տնտեսական նոր հարաբերությունների ձևավորման խնդիրներում:

Մինչև 20-րդ դարի 50-ական թվականները

ընդ գործում էին սնանկության անգլոսաքսոնական և ամերիկյան մոդելները, իսկ այսօր արդեն գործում են սնանկության 5 մոդել՝ ծայրահեղ պրոպարտապանական, ծայրահեղ պրոպարտատիրական, սրանց միջանկյալ տարբերակները և չեզոք մոդելը:

Տարբեր երկրներում կիրառվող անվճարունակության (սնանկության) իրավական կարգավորման համակարգերը միմյանցից տարբերվում են յուրաքանչյուր երկրի օրենսդիրների կողմից հետապնդվող կոնկրետ նպատակներով: Այդ նպատակները տարբերվում են մասնավորապես՝

1. առավելագույնս բավարարել պարտատերերի պահանջները.
2. փրկել գոյատևման ընդունակ անհատ գործարարի կամ իրավաբանական անձի բիզնեսը,
3. միջոցները արդար բաժանել կողմերի միջև,
4. վերակազմավորել դեռևս չլուծարված ընկերությունը և այլն:

Արդյունքում առաջնային խնդիրը մի իրավական համակարգի համար լինում է առավելագույնս բավարարել պարտատերերի պահանջները, մյուսների համար՝ բիզնեսի փրկությունը և աշխատատեղերի պահպանումը: Կա նաև երրորդ մոդել (ամերիկյան, ֆրանսիական և ռուսական), ըստ որի՝ առաջնային է համարվում միջոցների արդյունավետ բաշխման միջոցով մակրոէկոնոմիկական գործառույթների իրականացումը, այսինքն անվճարունակության իրավական կարգավորման այնպիսի մեխանիզմների մշակումը, որը հնարավորություն է տալիս, չխախտելով պարտատերերի շահերը, պահպանել կազմակերպության գործունեությունը<sup>3</sup>:

● ՕՐԻՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

<sup>1</sup> Տե՛ս Բարսեղյան Ս.Կ., Գործարարական իրավունք, Երևան, 2009, էջ 152:

<sup>2</sup> Տե՛ս Բարսեղյան Ս. Կ., «Հ քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Երևան, 2006, էջ 112:

<sup>3</sup> Տե՛ս Степанов В.В., Несостоятельность в России, Англии, Франции, Германии., М., 1999, с. 23.

Այսպիսով սնանկության իրավական կարգավորումն ուղղված է պարտատերերի և պարտապանների շահերի համապատասխանության ապահովմանը:

Սնանկությունը ֆիզիկական կամ իրավաբանական անձի փաստացի անկարողությունն է մարելու բոլոր պարտատերերի պարտքերը:

Սնանկության ինստիտուտն իրենից ներկայացնում է իրավունքի տարբեր ճյուղերի նորմեր ընդգրկող համալիր ինստիտուտ: Քաղաքացիաիրավական կարգավորման շրջանակներում սնանկությունը հանդիսանում է իրավաբանական անձի լուծարման (անհատ գործարարի գործունեության դադարեցման) հիմքերից մեկը, մնացած հարաբերությունները (օրինակ, պարտատերերի և պարտապանների վիճելի հարցերը լուծելու դատական և արտադատական կարգը) կարգավորված են իրավունքի այլ ճյուղերի նորմերով<sup>4</sup>:

Սնանկության հետ կապված հարաբերությունները նախկինում կարգավորվում էին «Անվճարունակության (սնանկության) մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-17-Ն ՀՀ օրենքով, իսկ ներկայումս գործում է «Սնանկության մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունված ՀՕ-51-Ն ՀՀ օրենքը: Օրենքն ուժի մեջ է մտել 2007 թվականի փետրվարի 10-ից: Սույն ոլորտը կարգավորում է նաև Ունսիտրալի կողմից 1997 թվականի Անդրսահմանային սնանկության մասին օրենքը, Եվրամիության 1995 թվականի հունիսի 5-ին Ստամբուլում ընդունված «Սնանկության որոշ միջազգային հարցերի մասին» եվրոպական կոնվենցիան:

Սնանկության ինստիտուտը կարգավորող իրավական նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն հանրային և մասնավոր իրավունքների շփման եզրում գտնվող համալիր բնույթ ունեցող ինստիտուտ է և պատահական չէ այն փաստը, որ «Սնանկության մասին» օրենքը նյութաիրավական նորմերի հետ միասին պարունակում է բավականին մեծ թվով դատավարական բնույթի նորմեր<sup>5</sup>:

Սնանկացման գործընթացը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ անվճարունակություն և սնանկություն հասկացությունները միմյանցից չեն տարբերվում, դրանք օգտագործվում են որպես հոմանիշներ, սակայն, ինչպես գտնում են որոշ իրավաբաններ, այդ տերմինների նմանօրինակ օգտագործման նկատմամբ օրենսդրի վերաբերմունքը հաջողված համարել չի կարելի<sup>6</sup>:

Արտասահմանյան երկրներում անվճարունակություն և սնանկություն հասկացությունները միմյանցից տարբերվում են: Անվճարունակություն ասելով հասկանում են վճարելու բացարձակ անկարողություն, իսկ սնանկության տակ՝ տվյալ պահին վճարելու հարաբերական կամ գործնական անկարողությունը: Սնանկությունը կարող է հետևանք լինել ոչ թե անվճարունակության, այլ վճարման ժամկետը լրանալու պահին միջոցների բացակայության կամ անբավարարության: Այդ պատճառով էլ անվճարունակությունը համարվում է անվերապահ լուծարման հիմք, իսկ սնանկացումն այնպիսի հատուկ արարողակարգի կիրառման հիմք, որն իր մեջ ներառում է նաև ֆինանսական առողջացման, գործունեության վերակազմակերպման, սանացիայի և այլ գործառույթներ<sup>7</sup>:

Գործարարական հարաբերությունների սուբյեկտներին սնանկ ճանաչելու համար օրենսդիրը հիմք է ընդունում տնտեսական երկու կատեգորիաներ՝ վճարելու անկարողությունը և անվճարունակությունը<sup>8</sup>:

Վճարելու անկարողությունն առկա է այն դեպքում, երբ պարտավորությունների գումարը գերազանցում է պարտապանի ունեցվածքի արժեքը, և նա ի վիճակի չէ բավարարելու բոլոր պարտատերերի պահանջները: Ըստ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պարտապանն անվճարունակ է, եթե առկա է հետևյալ հիմքերից մեկը՝

1. պարտապանի պարտավորությունները գերազանցում են պարտապանի ակտիվների արժեքը (հաշվեկշռային անվճարունակություն),

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

<sup>4</sup> Տե՛ս Бельх В.С., Дубинчин А.А., Скуратовский М.А., Правовые основы несостоятельности (банкротства), М., 2001, с.22.  
<sup>5</sup> Տե՛ս Карелина И.А., Правовое регулирование несостоятельности (банкротства), М.,2006, с. 12.  
<sup>6</sup> Տե՛ս Предпринимательское право Российской Федерации, отв. ред. Е.П. Губин, П. Г. Лахно, М.,2003, с. 309.  
<sup>7</sup> Տե՛ս Քարսեղյան Տ.Վ., Գործարարական իրավունք, Երևան, 2009, էջ 155:  
<sup>8</sup> Տե՛ս Бельх В.С., Правовое регулирование предпринимательской деятельности в России: монография., М., 2005, с. 293.

2. պարտապանն ի վիճակի չէ կատարելու իր ժամկետանց դրամական պարտավորությունները (փաստացի անվճարունակություն):

Անվճարունակությունն առկա է այն դեպքում, երբ անկախ բոլոր պարտատերերի պահանջների բավարարման համար առկա ունեցվածքից, պարտապանը թույլ է տալիս անվիճելի վճարային պարտավորությունների կատարման կետանց: Վճարային պարտավորությունը համարվում է անվիճելի, եթե պարտապանը չի առարկում դրա դեմ, կամ եթե նա առարկում է հիշյալ պարտավորության դեմ, սակայն՝

1. վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը,
2. պահանջը հիմնված է գրավոր գործարքի վրա, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի,
3. պահանջը բխում է օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտապանի պարտավորությունից, և պարտապանը չի ապացուցում, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի,
4. պահանջի չվիճարկվող մասը գերազանցում է՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը:

Սնանկության գործի հարուցման հիմնական չափանիշ օրենքը համարում է անվճարունակությունը, քանի որ պարտքերի հանրագումարի չափը համարվում է անվիճելի փաստ և պարտատերերի պահանջները պարտապանի կողմից վիճարկելը դատարանի դիմելու արգելք չի հանդիսանում<sup>9</sup>:

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի՝ քաղաքացին սնանկ կարող է ճանաչվել միայն դատարանի վճռով, երբ ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները: Նման վճռի կայացման պահից նրա՝ որպես գործարարի գրանցումը կորցնում է ուժը<sup>10</sup>: Քաղաքացուն

դատարանով սնանկ ճանաչելու դեպքում պարտատերերի պահանջների բավարարման կարգը և դադարման հիմքերը, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարման առանձնահատկությունները սահմանվում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձանց սնանկության հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենքի դրույթները, ինչը նշանակում է, որ ֆիզիկական անձի նկատմամբ կիրառվում են մյուս սուբյեկտների սնանկության հետ կապված հարաբերությունները կարգավորող ընդհանուր դրույթները, որն արդարացված չէ: Պարտապան ֆիզիկական անձի սնանկության նկատմամբ պետք է կիրառվի առանձին՝ հատուկ ընթացակարգ:

Սնանկացման կանխարգելման համար մեծ նշանակություն ունի ֆինանսական առողջացման (սանացիայի) ընթացակարգի կիրառությունը: «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 94 հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձի առողջացման ծրագրի կարող է ներկայացնել միայն պարտապանը, որը հաստատում է դատարանը: «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում տվյալ հոդվածը որոշակի փոփոխությունների է ենթարկվել, մասնավորապես նշվում է, որ ֆիզիկական անձի ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատում է դատարանը, եթե այն համապատասխանում է օրենքով սահմանված պահանջներին և առկա է պարտապանի և գրանցված պարտատիրոջ համաձայնությունը: Նախագծում նաև սահմանված է ֆիզիկական անձի առողջացման ծրագրի առավելագույն ժամկետը, որը չի կարող գերազանցել չորս տարին: Նախագծում, փաստորեն, ֆինանսական առողջացման ծրագրի հաստատման պարտադիր պայմաններից մեկը պարտապանի և գրանցված պարտատիրոջ համաձայնության առկայությունն է, ինչը բացառում է պարտապանի կամայականության որևէ դրսևորում:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 89-րդ

<sup>9</sup> Տե՛ս Բարսեղյան Ս.Կ., Գործարարական իրավունք, Երևան, 2009, էջ 156-158:

<sup>10</sup> Տե՛ս Բարսեղյան Ս.Կ., ՀՀ քաղաքացիական իրավունք, առաջին մաս, Երևան, 2006, էջ 112:



հողվածի համաձայն՝ սնանկության գործի ցանկացած փուլում կառավարչի կամ պարտապանի միջնորդության հիման վրա գործը կարող է ավարտվել, եթե պարտատերերի պահանջները բավարարվել են կամ նրանք հրաժարվել են իրենց պահանջներից, կամ երկարաձգել են դրանց կատարման ժամկետը, կամ պահանջներ չեն ներկայացվել, որի արդյունքում պարտավորությունների չափը նվազել է նվազագույն աշխատավարձի հազարապատիկից և առկա չէ որևէ պարտավորության գծով 60 օրից ավելի կետանց:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 97-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձի սնանկության գործը պարտավորությունների կատարումից ազատելով ավարտելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ սնանկ ճանաչված ֆիզիկական անձն ազատվում է բոլոր դրամական պարտավորությունների կատարումից, սակայն օրենքը նախատեսում է որոշակի բացառություններ, որոնց առկայության դեպքում ֆիզիկական անձը չի կարող ազատվել դրամական պարտավորությունների կատարումից, մասնավորապես՝ սնանկության դիմում ներկայացնելուն նախորդած 90 օրվա ընթացքում ստանձնած և 100.000 դրամը գերազանցող պարտավորությունների, ուսման վարկավորման գումարը վերադարձնելու պարտավորության, ինչպես նաև պարտատերերի պահանջներից սնանկության վարույթի ընթացքում գույք թաքցրած լինելու դեպքում՝ թաքցված գույքի արժեքի չափով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածում ամրագրված են անհատ ձեռնարկատիրոջ սնանկության առանձնահատկությունները:

Անհատ գործարարները, ի տարբերություն իրավաբանական անձանց, ֆիզիկական անձինք են և լիկվիդացվել չեն կարող: Այդ պատճառով անհատ գործարարին սնանկ ճանաչելու պահից ուժը կորցնում է նրա՝ որպես անհատ գործարարի պետական գրանցումը: Սնանկ ճանաչվելուց հետո՝ հինգ տարվա ընթացքում, նա չի կարող նորից անհատ-գործարար գրանցվել:

Անհատ գործարարին սնանկ ճանաչելիս կարող է վաճառվել այն գույքը, որն օգտագործվում է գործարարական գործունեություն իրականացնելու համար, ինչպես նաև, որպես քաղաքացի, նրան պատկանող գույքը, բացառություն է կազմում այն գույքը, որի վրա օրենքով չի թույլատրվում բռնագանձում տարածել: Բացի այդ գույքից պարտապանի կամ այլ անձանց պահանջով դատարանի որոշմամբ բռնագանձում կարող է չտարածվել բռնագանձման ենթակա պարտապանի այն գույքի վրա, որի արժեքն էական ազդեցություն չի կարող ունենալ պարտատերերի պահանջների բավարարման համար:

Կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ սնանկ ճանաչված անհատ գործարարը չի կարող խուսափել ժառանգությունն ընդունելուց, եթե անհատ գործարարը խուսափում է ժառանգությունն ընդունելուց, եթե անհատ գործարարը խուսափում է ժառանգություն բացելուն ուղղված գործողությունների կատարումից, ապա նրա փոխարեն ժառանգության բացման համար կարող է դիմել կառավարիչը, իսկ եթե հրաժարվում է ժառանգությունն ընդունելուց, ապա նրա փոխարեն ժառանգությունը կարող է ընդունել կառավարիչը:

Անհատ գործարարը՝ որպես քաղաքացի, չի կարող ազատվել անձնական բնույթի, ինչպես նաև գործարարական գործունեության հետ չկապված պարտավորություններից: Դրանց համար նա կրում է քաղաքացիաիրավական գույքային պատասխանատվություն<sup>11</sup>:

Սնանկության ինստիտուտը կարելի է համարել պարտատերերի և պարտապանների միջև առաջացած ֆինանսական խնդիրների լուծման քաղաքակիրթ եղանակ, որը պարտապան ֆիզիկական անձանց հնարավորություն է տալիս ազատվել բոլոր դրամական պարտավորությունների կատարումից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, որը պարտապանն ինքնուրույն չէր կարող՝ նախատեսելով նաև ֆինանսական առողջացման ընթացակարգի կիրառությունը, որն էական նշանակություն ունի սնանկացման կանխարգելման համար:

<sup>11</sup> Տե՛ս Բարսեղյան Ս.Կ., Գործարարական իրավունք, Երևան, 2009, էջ 181-182:

**ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ**

ՀՀ արդարադատության նախարարության կազմակերպական-իրավական վարչության առաջին կարգի մասնագետ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

**ԻՆՏԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՈՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆԿԱՆՈՒՄՆԵՐԸ**

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը (այսուհետև՝ իշխանությունների բաժանման սկզբունք) ժամանակակից պետությունների սահմանադրական կարգի հիմունքներից է: Իշխանությունների բաժանման սկզբունքի հիմնական նպատակը այնպիսի մեխանիզմների և կառուցակարգերի մշակումն է, որոնց միջոցով հնարավոր կլինի խուսափել պետական իշխանության կենտրոնացումից մեկ անձի կամ մարմնի ձեռքում և դրա միջոցով կապահովվի արդյունավետ և վերահսկելի պետական կառավարում:

Իշխանությունների բաժանման ժամանակակից սկզբունքի դերը կարևորել են մի շարք հեղինակներ: Բավականին դիպուկ է Հ. Խաչատրյանի դիտարկումը, ով նշում է, որ ամբողջ իշխանության կենտրոնացումը մեկ մարմնի ձեռքում հղի է անկանխատեսելի հետևանքներով, քանի որ ամբողջատիրական մարմինները դառնում են բացարձակապես անկառավարելի, դրանով ստեղծվում է բռնատիրական ռեժիմի հաստատման լայն հնարավորություն<sup>1</sup>: Հակոբյանը նշում է, որ իշխանությունների բաժանման սկզբունքի կիրառումը նախևառաջ միտված է պաշտպանելու ժողովրդավարությունը, պայքարելու բռնատիրական քաղաքական ռեժիմների դեմ, թույլ չի տալիս վարչական և քաղաքական ուժերի կուտակում մեկի ձեռքում և նպաստում է մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորմանը ու պաշտպանության ապահովմանը<sup>2</sup>: Ըստ Գ. Հարություն-

յանի՝ իշխանությունների կազմակերպման ծայրահեղ իրավիճակը իշխանության օլիգարխացումն է, որի դեպքում առաջանում է համակարգի քրեականացում և պետության մեջ ամենահարուստ մարդիկ դառնում են պետական պաշտոնյաներ և քաղաքական էլիտա: Նման վտանգից խուսափելու հիմնական ճանապարհը իշխանության իրական բաժանման և հավասարակշռման ապահովումն է, քաղաքական, վարչական և տնտեսական ներուժի սերտաճման բացառումը<sup>3</sup>: Նմանատիպ տեսակետ է արտահայտել նաև Գ. Դանիելյանը, ով նշում է, որ իշխանությունների բաժանման և հակակշռման սկզբունքի ոչ լիարժեք իրացման պայմաններում հող է ստեղծվում այնպիսի բացասական երևույթների համար, ինչպիսիք են ստվերային քաղաքական հարաբերություններն ու դրանցով թելադրված պայմանավորվածությունները, սուբյեկտիվիզմի դրսևորումները և այլն<sup>4</sup>:

Բավականին արժեքավոր է Վայլի դիտարկումը ժամանակակից իշխանությունների բաժանման սկզբունքի վերաբերյալ: Վայլը առանձնացրել է իշխանությունների բաժանման սկզբունքի երկու հիմնադրույթներ: Առաջինը՝ ժողովրդավարական պետությունը չի կարող գոյություն ունենալ առանց իշխանությունների բաժանման սկզբունքի և երկրորդը՝ այն պետությունում որտեղ առկա է իշխանությունների բաժանման սկզբունքը դեռևս ապահովված չէ բռնակալականի վերածվելու<sup>5</sup>: Սրանով հեղինակն ընդգծել է այն գաղափարը, որ իշխանու-

<sup>1</sup> Տեն Հ. Խաչատրյան «Իշխանությունների տարանջատում և պառլամենտարիզմ», Երևան, «Արեգ», 1994թ., էջ 5-8.  
<sup>2</sup> Տեն Հ. Հակոբյան «Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում», Երևան, «Տիգրան Մեծ», 2007թ., էջ 28.  
<sup>3</sup> Տեն Գ. Հարությունյան «Սահմանադրական մշտադիտարկում», Երևան, «Նժար», 2016թ., էջ 116-119.  
<sup>4</sup> Տեն Գ.Բ. Դանիելյան, Վ.Ա. Այվազյան, Ա.Ա. Մանասյան «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում» (գիտագործնական հետազոտություն), Երևան, «Հայրապետ» 2015թ., էջ 24.  
<sup>5</sup> Տեն M. Vile, “Constitutionalism and the Separation of Powers”, “Oxford University press” 1967, 2d ed. 1998, p. 339., հասանելի է՝ <http://oll.libertyfund.org/titles/677>

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

թյունների բաժանման սկզբունքի նորմատիվ-իրավական ամրագրումը, դեռևս բավարար չէ իշխանությունների բաժանման սկզբունքի նպատակին հասնելու համար և անհրաժեշտ են նաև գործուն մեխանիզմներ և կառուցակարգեր, որոնցով հնարավոր կլինի խուսափել իշխանության կենտրոնացումից և որպես դրա արդյունք բռնապետության վերածվելուց:

Ամփոփելով վերոնշյալ դիտարկումները՝ կարող ենք նշել, որ ներկայումս էլ իշխանությունների բաժանման սկզբունքը շարունակում է մնալ կարևորագույն սահմանադրական սկզբունքերից մեկը, որի հիմնական նպատակն է ստեղծել այնպիսի մեխանիզմներ և կառուցակարգեր, որոնցով հնարավոր կլինի խուսափել պետական իշխանության կենտրոնացումից:

Իշխանությունների բաժանման սկզբունքը համարվում է ժամանակակից իրավական պետության բնութագրող հիմնական հատկանիշներից մեկը: Մի շարք հեղինակներ<sup>6</sup> կարևորել են իշխանությունների բաժանման սկզբունքի և իրավական պետության միջև առկա անմիջական կապը: Ա. Մոսքոսոն նշում է, որ իրավական պետությունը պետք է հիմնվի՝ իրավունքի գերակայության, օրինականության, իրավական պատասխանատվության, իշխանությունների բաժանման և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքների վրա<sup>7</sup>: Միավորված ազգերի կազմակերպությունը և «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովը» նույնպես գտնում են, որ «իրավական պետություն» հասկացությունը և իշխանությունների բաժանման սկզբունքը փոխկապակցված են: ՄԱԿ-ն առանձնացրել է իրավական

պետությանը բնորոշող հետևյալ հատկանիշները՝ իրավունքի գերակայություն, օրենքի առջև բոլորի հավասարություն, մասնակցային ժողովրդավարության ապահովում, իրավական որոշակիության ապահովում, ինչպես նաև իշխանությունների բաժանման սկզբունքի կիրառում<sup>8</sup>: Վենետիկի հանձնաժողովը նույնպես իշխանությունների բաժանման սկզբունքը համարում է իրավական պետության հիմնական հատկանիշներից մեկը և կարևորել է անկախ և անկողմնակալ դատական իշխանության առկայությունը<sup>9</sup>: Այսպիսով՝ կարող ենք նշել, որ ներկայումս իրավական պետություն հասկացությունը և իշխանությունների բաժանման սկզբունքը անմիջականորեն փոխկապակցված են:

Տեսական գրականությունում քննարկման առարկա է հանդիսացել նաև իշխանությունների բաժանման սկզբունքի և միասնական պետական իշխանության հարաբերակցության խնդիրը: Ժ. Ջհանգիրյանը նշում է, որ պետական իշխանության միասնականության և իշխանությունների բաժանման հարցը բազմաձևակարգակ խնդիր է, որը ներառում է տնտեսական, սոցիալ-քաղաքական, գաղափարական հարաբերություններ, և որպես այդպիսին այն եղել է և կմնա ուսումնասիրման յուրահատուկ օբյեկտ<sup>10</sup>: Նշված խնդրի արդիականությունն ընդգծել է նաև Լ. Նուդենենկոն, ով նշում է, որ ներկայումս բանավեճեր են վարվում իշխանությունների բաժանման սկզբունքի և ազգային ինքնիշխանության անբաժանելիության սկզբունքի գաղափարախոսությունները համապատասխանեցնելու ուղղությամբ<sup>11</sup>:

Դեռևս 16-17-րդ դարերում գերիշխում էին,

<sup>6</sup> Տե՛ս Paul R. Verkuil, “Separation of powers, the rule of law and the idea of independence”, 30 Wm. & Mary L. Rev. 301, 1989, pp. 303-307. հասանելի է՝ <http://scholarship.law.wm.edu/wmlr/vol30/iss2/8>, Տե՛ս նաև՝ G. Goudenhoof, “The theory of the rule of law, a global response to the challenges of national identities” Arhipelag xxi press, 2014., p. 48. հասանելի էր՝ <http://www.upm.ro/gidni/GIDNI-01/GIDNI%2001%20-%20Law.pdf>

<sup>7</sup> Տե՛ս A. M. Moscoso, “A new concept of the separation of powers, the fifth power, transparency and citizen participation. A new proposal of new Latin American constitutionalism the case of Ecuador (2008) “2014, p. 3., հասանելի է՝ <https://ecpr.eu/Filestore/PaperProposal/551deb1d-22b3-47b2-8e8a-4facc3066708.pdf>

<sup>8</sup> Տե՛ս United Nations General Assembly, “Human rights, democracy and the rule of law” 19 March 2012, A/HRC/19/L.27 հասանելի էր՝ <http://blog.unwatch.org/wp-content/uploads/Human-Rights-Democracy-and-the-Rule-of-Law1.pdf>, Տե՛ս նաև Report of the United Nations Secretary-General, “The rule of law and transitional justice in conflict and post-conflict societies”: UN SC, UN Doc. S/2004/616 at 4 հասանելի է՝ <http://www.ipu.org/splz-e/unga07/law.pdf>

<sup>9</sup> Տե՛ս European Commission for Democracy through Law, “Report on the rule of law”, Adopted by its 86th plenary session (Venice, 25-26 March 2011թ., հասանելի է՝ [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2011\)003rev-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2011)003rev-e)

<sup>10</sup> Տե՛ս Джаангирян Ж.Д. “Политический режим и его значение для реализации принципа разделения властей” «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1 . ստ. 70 հասանելի է՝ [http://lraber.asj-oa.am/68/3/2004-1\(70\).pdf](http://lraber.asj-oa.am/68/3/2004-1(70).pdf)

<sup>11</sup> Տե՛ս Енгибарян Р.В., Краснов Ю.К. “Теория государства и права” “Москва” 1999. с. 119.

իշխանության կետրոնացվածության և անբաժանելիության մասին տեսակետները: Թ. Հոբսը՝ «Լևիաթան» աշխատությունում նշում է, որ թագավորի անձը մարմնավորում է պետությունը, իսկ պետական իշխանության բաժանում նշանակում է քայքայել այն, քանի որ բաժանված իշխանությունները ոչնչացնում են միմյանց<sup>12</sup>: Ի հակադրություն նշված տեսակետի Մ. Սպերանսկին ընդգծում է պետական իշխանության միասնական լինելու կարևորությունը և նշում է, որ միասնական պետական իշխանությունը պետք է դրսևորվի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ձևով<sup>13</sup>: Գ. Շերշենևիչը իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինները չի անվանում իշխանություններ և նշում է, որ պետությունում երեք հավասար իշխանություններ գոյություն ունենալ չեն կարող: Ըստ հեղինակի՝ օրենսդիր, գործադիր և դատական մարմինները ոչ թե իշխանություններ են, այլ ամբողջական, միասնական, անբաժանելի իշխանության երեք ձևեր են, կամ իշխանության երեք գործառույթներ<sup>14</sup>: Այս կերպ հեղինակը չի ժխտում իշխանությունների բաժանման սկզբունքը, այլ նշում է, որ օրենսդիր, գործադիր և դատական մարմինները իշխանություններ անվանելը ընդունելի չի և դրանք անվանել է իշխանության ձևեր:

Իշխանությունների բաժանման սկզբունքի և միասնական պետական իշխանության հարաբերակցության հարցում բավականին արժեքավոր է Չիրկինի այն տեսակետը, համաձայն որի, առանձնացվում է իշխանության երկու ձև՝ քաղաքական իշխանություն և պետական իշխանություն: Ըստ հեղինակի, երբ խոսքը վերաբերվում է քաղաքական իշխանությանը, ապա այն անբաժանելի և միասնական է: Իսկ երբ խոսքը վերաբերվում է պետական իշխանությանը, ապա այն բաժանվում է գործունեության որոշ ձևերի՝ օրենսդիր, գործադիր, դատական, վերահսկողական և այլն<sup>15</sup>: Այս գաղափարը զարգացրել է նաև Վենետիկի հանձնա-

ժողովը՝ նշելով որ իշխանությունների բաժանման սկզբունքը բարդանում է քաղաքականության մշակման, քաղաքական որոշումների ընդունման, դրանց կատարման և վերահսկման համատեքստում: Իշխանության ճյուղերը, առաձին կատարելով իրենց գործառույթները, քաղաքական գործընթացներում հանդես են գալիս, որպես մեկ միասնական իշխանություն<sup>16</sup>:

Ամփոփելով վերոնշյալ տեսակետները՝ կարծում ենք, որ իշխանությունների բաժանման սկզբունքի և միասնական պետական իշխանության հարաբերակցության հարցում տեղին է Չիրկինի դիտարկումը, համաձայն որի առանձնացվում է իշխանության երկու տեսակ՝ քաղաքական իշխանություն և պետական իշխանություն: Քաղաքական իշխանությունը միասնական և անբաժանելի, իսկ պետական իշխանությունն ունի նպատակաուղղված գործունեության բնույթ, այն է՝ հանրային նշանակության գործերի կառավարման կազմակերպումը, որը բաժանվում է իշխանության ճյուղերի միջև: Երբ նշվում է իշխանության բաժանման սկզբունքի մասին, այս դեպքում խոսքը ոչ թե միասնական քաղաքական իշխանության մասնատման, տարանջատման, առանձնացման մասին է, որի արդյունքում կառաջանան նոր իշխանություններ, այլ խոսքը պետական իշխանությանը վերապահված գործառույթների իրականացման համար քաղաքական իշխանությունից աժանցված օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ճյուղերի առանձնացման մասին է, որոնք իրենց սահմանադրական լիազորությունների շրջանակներում իրականացնում են իշխանական գործառույթները և զսպումների ու հավասարակշռության մեխանիզմների միջոցով կանխում իշխանության մյուս ճյուղերի կողմից իրենց սահմանադրական լիազորությունների գերազանցումը, դրանով ապահովելով իշխանություն ճյուղերի միջև սահմանադրական հավասարակշռվածություն:

Տեսական գրականությունում քննարկման

<sup>12</sup> Տե՛ս Т. Гоббс, «Избранные произведения» Т.1, «Москва»1964, с. 371.

<sup>13</sup> Տե՛ս Сперанский М. М. «План государственного преобразования графа», «Москва» 1905, с. 22-26.

<sup>14</sup> Տե՛ս Шершеневич Г. Ф. «Общее учение о праве и государстве», «Москва», 1911., с. 34.

<sup>15</sup> Տե՛ս Чиркин В.Е. նշված աշխատություն, հղում 7, ст. 8,11.

<sup>16</sup> Տե՛ս European Commission for Democracy through Law, «Conference on relations of the constitutional court with other public authorities» Chisinau, Moldova 24-25 September 2015, CDL-JU(2015)021 p.13 հասանելի է՝ [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-JU\(2015\)021-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-JU(2015)021-e)

առարկա է հանդիսացել նաև իշխանությունների բաժանման՝ որպես իրավական և որպես քաղաքական սկզբունքի հարաբերակցության խնդիրը: Որոշ հեղինակներ իշխանությունների բաժանման սկզբունքը համարում են և՛ իրավական, և՛ քաղաքական սկզբունք: Ըստ Մուլլերսի՝ իշխանությունների բաժանման սկզբունքը չի կարելի համարել զուտ իրավական սկզբունք, քանի որ, այն զարգացել է այն ժամանակ, երբ իրավունքը և քաղաքականությունը միմյանցից տարանջատված չէին: Զ. Ռայսը նույնպես կարծում է, որ իշխանությունների բաժանման իրավական և քաղաքական սկզբունքները փոխկապակցված են և փոխադարձաբար ուժեղացնում են իրավական և քաղաքական համակարգը<sup>17</sup>:

Ա. Ջադորզին կարևորում է իշխանությունների բաժանման սկզբունքի կապը քաղաքական իրականության հետ, նշելով, որ իշխանությունների բաժանման սկզբունքը ներկայումս կորցրել է իր արդիականությունը, քանի որ իշխանության ճյուղերը ձևավորվում և գործում են ազդեցիկ քաղաքական ուժերի ազդեցությամբ: Ըստ հեղինակի, երբ իշխանության երկու ճյուղերում գերակշռում է նույն քաղաքական կուսակցությունը, (որպես այդպիսիք նշում է Ռուսաստանը և Ուկրաինան), ապա իշխանության ճյուղերի միջև չեն կարող լինել հսկողության և հավասարակշռության գործող մեխանիզմներ, թեպետ քաղաքական կուսակցություններն ապահովագրված չեն պառակտվելու վտանգից և ներանձնային հակասություններից<sup>18</sup>: Ըստ Զ. Սանքուիսթի կուսակցությունները օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերը կապում են միմյանց, որի հիմքում ընկած են կուսակցական ընդհանուր շահերը և նպատակները, որի արդյունքում կուսակցությունները սկսվում են նույնացվել իշխանության ճյուղի հետ<sup>19</sup>: Նմանատիպ

տեսակետներ են արտահայտել նաև Կ. Կարլոնը<sup>20</sup> և Լևինսոնը: Լևինսոնը նշում է, որ վեստմինստրյան կառավարման մոդելը շեղվում է իշխանությունների բաժանման ձևական կողմից, մինչդեռ ամերիկյան և ֆրանսիական մոդելների դեպքում կուսակցությունները դառնում են քաղաքական համաձայնությունների և անհամաձայնությունների ամենամեծ «գիշատիչը»<sup>21</sup>:

Լևինսոնը և Փլանդը «Կուսակցությունների բաժանում և ոչ թե իշխանությունների» հոդվածում առաջարկել են, ավելի շատ ուշադրություն դարձնել քաղաքական կուսակցությունների միջև հավասարակշռության ապահովման խնդրին, քան իշխանության ճյուղերի ձևական գործառութային բաժանման վրա: Նրանք նշում են, որ «միավորված կուսակցական կառավարության» դեպքում, կուսակցությունները կարող են վերացնել իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռության մեխանիզմները: Ըստ հեղինակների ներկայումս քաղաքական մրցակցություն տեղի է ունենում առավել շատ քաղաքական կուսակցությունների միջև, քան իշխանության ճյուղերի, իսկ պաշտոնյաների ձգտումներն առավել շատ կապված են հենց կուսակցական շահերի հետ<sup>22</sup>: Իշխանությունների բաժանման սկզբունքի և քաղաքական գործընթացների հարաբերակցությանն անդրադարձել է նաև Հ. Հակոբյանը, ով նշել է, որ Խորհրդային Միությունում տեսականորեն բավականին կատարյալ պետական կառավարման կառուցակարգեր էին մշակված: Սակայն իրականում չէին կիրառվում, քանի որ մինչև Գերագույն խորհրդի նստաշրջանի գումարումը հրավիրվում էր կուսակցության պլենում և որոշում էր կայացվում, որ Գերագույն խորհրդի անդամները պետք է միաձայն հավանություն տան նստաշրջանում ընդգրկված բոլոր հարցերին: Արդյունքում կուսակցության մարմ-

<sup>17</sup> St' u Mollers, Christoph "The three branches: a comparative model of separation of powers"; Oxford, Oxford University press, 2013 p. 3,10.

<sup>18</sup> St' u «Separation of Powers in Russia and Ukraine: A Comparative Perspective Conference Proceedings» Edited by F. Joseph Dresen and William E. Pomeranz, Washington, 2011 p. 40. Հասանելի էր՝ <https://searchworks.stanford.edu/view/10103035>

<sup>19</sup> St' u J.L. Sundquist, "A political theory for the new era of coalition government in the United States"; 103 pol. sci. q. 1988., p. 613-614.

<sup>20</sup> St' u E.Carolan, "Towards a varifocal model of the separation of powers", Draft paper for the IACL session no. 15 on the transformation of the principle of the separation of powers, University College Dublin, p. 4, հասանելի էր՝ <https://www.jus.uio.no/english/research/news-and-events/events/conferences/2014/wccl-cmdc/wccl/papers/ws15/w15-carolan.pdf>

<sup>21</sup> St' u Levinson, Daryl J. and Pildes, Richard H., "Separation of parties, not powers" New York university public law and legal theory working papers, 2006. p. 12-13, հասանելի էր՝ [http://lsr.nellco.org/nyu\\_plltwp/25](http://lsr.nellco.org/nyu_plltwp/25)

<sup>22</sup> St' u Levinson, Daryl J. and Pildes, Richard H., նշված աշխատություն, հղում 22.

նի որոշումը դառնում էր վճռորոշ և դրանից էին ածանցվում Գերագույն խորհրդի որոշումները<sup>23</sup>:

Կարծում ենք, որ այն դեպքում, երբ իշխանության օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերը գտնվում են նույն կուսակցության ձեռքում, կարող է առաջանալ օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերի սերտաճման իրական վտանգ, իսկ իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռության մեխանիզմները կարող են կորցնել իրենց նշանակությունը: Նման իրավիճակում կարևորվում է քաղաքական ընդդիմության դերը, որը պետք է ունենա բավականաչափ գործիքներ և միջոցներ, որոնցով կկարողանա զսպել մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի գործողությունները և այդ կերպ նրան պահել սահմանադրական լիազորությունների շրջանակներում: Այս հանգամանքը կարևորել է նաև Ա. Հարությունյանը, ով նշել է, որ ներպառլամենտական հարաբերություններում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը ստանում է յուրահատուկ կարևորություն, խնդիրն այն է, որ հավասարակշռության ապահովման համար որոշակի խնդիր դրված է նաև քաղաքական փոքրամասնության վրա<sup>24</sup>: Իշխանությունների բաժանման սկզբունքի ապահովման գործում խորհրդարանական ընդդիմության կարևորությունն ընդգծել է նաև Վենետիկի հանձնաժողովը, որը «Պառլամենտում ընդդիմության դերը» զեկույցում, նշել է, որ պառլամենտի հիմնական գործառույթներից է համարվում վերահսկողություն իրականացնելը, որի իրականացման գործում ամենամեծ դերը պատկանում է հենց քաղաքական ընդդիմությանը<sup>25</sup>:

Ներկայումս քննարկման առարկա է հանդիսանում նաև իշխանությունների բաժանման սկզբունքի գործառույթային և կառուցակարգային զարգացման անհրաժեշտության հարցը: Որոշ հեղինակներ գտնում են, որ իշխանու-

թյունների բաժանման սկզբունքը չի կարող շեղվել իշխանությունների բաժանման եռաթև դոկտրինից: Ներսիսյանցը նշում է, որ իշխանությունների բաժանումը օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի միջև լիովին համահունչ է պետական իշխանության բնույթին և իշխանության ճյուղերը կարող են լինել երեքը և ոչ ավելին<sup>26</sup>: Գ. Հարությունյանը նույնպես գտնում է վտանգավոր է իշխանության երեք թևերից դուրս իշխանության նոր ճյուղի փնտրտուքները, որը ոչ այլ ինչ է, քան իշխանության ճյուղերի միջև հավասարակշռության բացառում<sup>27</sup>:

Սակայն ի հակադրություն վերոնշյալ տեսակետների, որոշ հեղինակներ կարծում են, որ պետական կառավարման մարմինները այլևս չեն տեղավորվում իշխանությունների դասական եռաթև բաժանման կառուցակարգում: Ըստ Բ.Աքկերմանի՝ երեք դար հետո ժամանակն է վերագնահատել Մոնտեսքիոյի իշխանությունների բաժանման տեսությունը: Պետք է մտածել՝ արդյոք ներկայումս առաջացած մարտահրավերներին պատասխանում է 18-րդ դարում առաջացած տեսությունը: Աքկերմանը՝ «Տեսություն Մոնտեսքիո» հոդվածում նշում է, որ ժամանակակից կառավարումն աստիճանաբար դուրս է գալիս իշխանությունների բաժանման դասական եռաթև կառուցակարգի շրջանակներից և պետությունները ստեղծում են նոր ինստիտուտներ՝ ինքնակառավարվող և ինքնակազմակերպվող մարմիններ, կենտրոնական բանկ, բարձրագույն աուդիտորական մարմին, մարդու իրավունքների պաշտպան, ընտրական հանձնաժողով, հակակոռուպցիոն մարմիններ և այլն<sup>28</sup>:

Ներկայումս գիտական շրջանակներում շարունակվում են իշխանության նոր ճյուղի փնտրտուքները: Ավտոնոմովը նշում են, որ ժամանակակից սահմանադրական զարգացումների արդյունքում, երբեմն պետական մարմինները դուրս են գալիս իշխանության դասական

<sup>23</sup> Տե՛ս Հ. Հակոբյան, նշված աշխատություն, հղում 2. էջ 39.

<sup>24</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական մեկնաբանություններ» /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյան, Ա.Վաղարշյան/ Երևան, «Իրավունք» 2010թ. էջ 88.

<sup>25</sup> Տե՛ս Venice Commission, “Report on the role of the opposition in a democratic parliament” adopted by 84th Plenary Session (Venice 15-16 October 2010), կետ 117 CDL-AD(2010)025 հասանելի է՝ [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2010\)025-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2010)025-e)

<sup>26</sup> Տե՛ս Нерсесянц В. С., “Общая теория права и государства”, Москва” 1999, с. 45.

<sup>27</sup> Տե՛ս Գ. Հարությունյան, «Սահմանադրությունից սահմանադրականություն», Երևան, «Նժար», 2004թ., էջ. 28-29

<sup>28</sup> Տե՛ս B.Ackerman, “Goodbye Montesquieu”, in comparative administrative law (Susan Rose-Ackerman & Peter Lindseth eds.) 2011., p. 129.

եռաթև բաժանման շրջանակներից՝ ստեղծելով իշխանության այլ ճյուղեր՝ վերահսկողական, ընտրական, ֆինանսական, պետության ղեկավարի<sup>29</sup>: Պ. Ստրանսը առաջարկում է իշխանությունների քառաթև բաժանում, Հ. Մերին՝ հնգաթև, իսկ Բ. Աքկերմանը՝ հատուկ նպատակով իշխանության ճյուղի ստեղծում<sup>30</sup>: Նշված հեղինակների կողմից առաջարկված մոդելներից յուրաքանչյուրի հիմքում ընկած է կառավարման ոլորտում առաջացած կոնկրետ խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Երբեմն իշխանության 4-րդ ճյուղ նշվում է Նախագահի ինստիտուտը, ինչն ամրագրված է նաև որոշ պետությունների սահմանադրություններում<sup>31</sup>: Սակայն Նախագահի որպես իշխանության չորրորդ ճյուղի մասին գաղափարները մի շարք հեղինակների կողմից ենթարկվել են քննադատության: Համաձայն որի, պետության գլխի կարգավիճակը իշխանության նոր ճյուղի առկայություն չի նշանակում, այնտեղ որտեղ կա իշխանությունների բաժանում, չի կարող լինել նախագահական իշխանություն, որը չհամընկնի գործադիր իշխանության հետ<sup>32</sup>:

Երբեմն իշխանության 4-րդ ճյուղ նշվում է սահմանադրական-վերահսկողական ճյուղը: Չիրկինը չի ժխտում այդպիսի ճյուղի հնարավորությունը և նշել է, որ սահմանադրական-վերահսկողական ճյուղի գործառույթներ իրականացնող պետական մարմինները չպետք է սահմանեն վարքագծի կանոններ, չպետք է զբաղվեն կազմակերպական աշխատանքով, քննեն քրեական կամ քաղաքացիական գործեր, այլ պետք է վեր հանեն իրավախախտումների կոնկ-

րետ փաստեր և դրանք ներկայացնեն պետական իրավասու մարմիններին<sup>33</sup>: Ֆինլանդիայում գործում է այդպիսի մարմին: Ֆինլանդիայի Սահմանադրության 10-րդ գլուխը վերնագրված է «Օրինականության հսկողություն», որի ղեկավարը պետական պաշտոնյա է, ով վերահսկում է կառավարման մարմինների գործողությունների օրինականությունը, սակայն իրավունք չունի չեղարկել ընդունված ակտը: Սահմանադրական-վերահսկողական ճյուղի մասին գաղափարը որոշ հեղինակներ քննադատել են: Բ. Ղազինյանը նպատակահարմար չի համարում սահմանադրական-վերահսկողական ճյուղի ստեղծում, նշելով որ այն կկրի արհեստական բնույթ, քանի որ պետական իշխանության յուրաքանչյուր ճյուղ, ինքնին, օժտված լինելով որոշակի հսկողական և վերահսկողական բնույթի լիազորություններով, օժտված է մյուս իշխանությունների ոչ իրավաչափ գործողություններին հակազդելու հնարավորությամբ<sup>34</sup>:

Լատինական Ամերիկայի մի շարք պետությունների սահմանադրական զարգացումների արդյունքում առաջացել են իշխանության նոր ճյուղեր: 2008թ. Էկվադորի սահմանադրությունը նախատեսել է իշխանության հնգաթև բաժանում՝ ավելացնելով ընտրական և հասարակական վերահսկողություն իրականացնող իշխանության ճյուղեր: Իշխանության 5-րդ ճյուղը ընտրական իշխանությունն է, որի հիմնական խնդիրն է թափանցիկ և արդյունավետ կազմակերպել ընտրական գործընթացները, այն կազմված է ընտրական խորհրդից և ընտրական վեճերը լուծող դատարանից<sup>35</sup>:

<sup>29</sup> Տե՛ս Автономов А.С., “Правовая онтология политики: к построению системы категорий” Москва” 1999., с. 269–272.

<sup>30</sup> Տե՛ս Peter L. Strauss, “The place of agencies in government, separation of powers and the fourth branch”, Vol. 84, No. 3, 1984. p. 573, Henry J. Merry, “Five-branch government: the full measure of constitutional checks and balances” University of Illinois Press, 1980., B. Ackerman, “The new separation of powers”, 113 Harvard law review 633, 2000, p. 723.

<sup>31</sup> Էստոնիայի սահմանադրության (հոդված 4-րդ) համաձայն «Պառլամենտը, նախագահը, կառավարությունը և դատարանները պետք է կազմակերպվեն իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հիման վրա», նմանատիպ ձևակերպում ունի նաև Լատվիայի սահմանադրությունը (հոդված 5-րդ), «Պետական իշխանությունն իրականացվում է պառլամենտի, հանրապետության նախագահի, կառավարության և դատարանների կողմից»:

<sup>32</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական մեկնաբանություններ» /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյան, Ա. Վաղարշյան/ Երևան «Իրավունք» 2010թ., էջ 93. հասանելի է՝ <http://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf>

<sup>33</sup> Տե՛ս Чиркин В.Е., “Государствование”, Учебник, Москва, “Юрист”, 1999., с. 258–260.

<sup>34</sup> Տե՛ս Բ. Ղազինյան «Իշխանությունների տարանջատումը որպես իրավական պետության հիմնարար սահմանադրական սկզբունք» «21-րդ դար», թիվ 3 (43), 2012թ. էջ 75–76.

<sup>35</sup> Վենեսուելայի սահմանադրությունը (հոդված 273-րդ) նախատեսում է քաղաքացիների իշխանություն, որն իրականացվում է էթիկայի պետական խորհրդի, մարդու իրավունքների պաշտպանի, գլխավոր դատախազի և ֆինանսական վերահսկող մարմինների միջոցով: Գործում է նաև ընտրական իշխանություն, որը կոչվում է ազգային ընտրական խորհուրդ: Նիկարագուայի 1986թ. սահմանադրությունը նույնպես նախատեսում էր, նոր ընտրական իշխանություն:

Ժամանակակից սահմանադրական զարգացումների արդյունքում ի հայտ են եկել նաև «անկախ» սահմանադրական մարմիններ: Որոնք համարվում են «անկախ» և իրականացնում են մասնագիտական գործառույթներ՝ ենթարկվելով սահմանադրությանը և օրենքներին<sup>36</sup>: «Անկախ» մասնագիտական մարմինների վերաբերյալ Գ. Հարությունյանը նշել է, որ իշխանությունների բաժանմանը և հավասարակշռությանը զուգահեռ աշխարհում ի հայտ են եկել հատուկ մասնագիտացված պետական ինստիտուտներ, որոնք պարտավոր են անկախաբար ապահովել սահմանադրության գերակայությունը ու անմիջական գործողությունը<sup>37</sup>:

Որոշ հեղինակներ իշխանությունների բաժանման սկզբունքի ապահովման հարցում կարևորում են անկախ պետական ծառայության անհրաժեշտությունը: Աքկերմանը նշել է, որ իշխանությունների բաժանմանը սկզբունքը հաջողությամբ ապահովում է դատարանի անկախությունը և մասնագիտացումը, սակայն նույնը չենք կարող ասել բյուրոկրատիայի վերաբերյալ: Օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև մշտական մրցակցությունը հսկողության տակ է պահում բյուրոկրատական ապարատը և ստեղծում է չափազանց քաղաքականացված բյուրոկրատական կառավարում<sup>38</sup>: Ըստ Լևինսոնի՝ իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռության մեխանիզմներն ուժեղացնելու համար պետք է ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնց դեպքում հնարավոր կլինի վարչական ապարատը առանձ-

նացնել կուսակցական ճնշումներից: Միակ ճանապարհը, որով հնարավոր կլինի կանխել իշխանության ամբողջական կենտրոնացումը կուսակցական կառավարման ձեռքում դա անկախ վարչական ապարատի գոյությունն է՝ կուսակցական հսկողությունից անկախ<sup>39</sup>:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք նշել, որ իշխանությունների բաժանման սկզբունքը իրավական պետությանը բնութագրող կարևոր սահմանադրական սկզբունքներից է: Իշխանությունների բաժանման սկզբունքը չի խախտում պետական իշխանության միասնական լինելու հատկանիշը: Ներկայումս իշխանությունների բաժանման սկզբունքը համարվում է իրավական և քաղաքական սկզբունք: Իշխանության ճյուղերի միջև զսպումների և հավասարակշռության մեխանիզմների արդյունավետ գործունեության ապահովման համար կարևոր նշանակություն ունի քաղաքական ընդդիմությունը, որը պետք է ունենա այնպիսի սահմանադրական լիազորություններ, որոնց միջոցով կկարողանա մեծամասնություն ունեցող քաղաքական ուժին պահել իր սահմանադրական լիազորությունների շրջանակներում: Բացի այդ ժամանակակից սահմանադրական զարգացումների արդյունքում, կարող ենք նշել, որ մի շարք պետություններ հաղթահարել են իշխանությունների բաժանման դասական եռաթև տեսությունը՝ ստեղծելով իշխանության նոր ճյուղեր և «անկախ» սահմանադրական մարմիններ:

<sup>36</sup> Հարվային Աֆրիկայի Սահմանադրությունը (բաժին 9-րդ) նախատեսել է վեց անկախ մարմիններ՝ դատախազություն, մարդու իրավունքների կոմիտե, մշակութային իրավունքների զարգացման և պաշտպանության կոմիտե, կրոնական և լեզվաբանական միավորում, գենդերային հավասարության կոմիտե, գլխավոր աուդիտոր և ընտրական հանձնաժողով: Այս մարմինները ստեղծվում են որպես անկախ և ենթակա են միայն սահմանադրությանը և օրենքներին, և իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում պառլամենտին: Թունիսի սահմանադրության (հոդված 125-րդ) համաձայն գործում են հետևյալ անկախ սահմանադրական մարմինները՝ ընտրական հանձնաժողով, հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով, մարդու իրավունքների կոմիտե, լավ կառավարման և հակակոռուպցիոն հանձնաժողով: Այս մարմինները պետք է ունենան ֆինանսական և վարչական անկախություն, ձևավորվում են ներկայացուցչների պալատի կողմից, և պատասխանատու են ներկայացուցիչների պալատի առջև: Պերուի սահմանադրության 161-րդ հոդվածի համաձայն ինքնավար մարմին է համարվում Օմբուցմենը: Ինդոնեզիայի սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն պետական ֆինանսների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար պետք է լինի գլխավոր աուդիտորական խորհուրդ, որը պետք է լինի ազատ և անկախ, 2015 թվականին ՀՀ սահմանադրական փոփոխությունների արդյունքում նույնպես նախատեսված են անկախ սահմանադրական մարմիններ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, Հեռուստատեսության և Ռադիոյի հանձնաժողով, Հաշվեքննիչ պալատ, Կենտրոնական բանկ:

<sup>37</sup> Տե՛ս Գ. Հարությունյան, նշված աշխատություն, հղում 3., էջ 112

<sup>38</sup> Տե՛ս Bruce Ackerman, “The new separation of powers,” Harvard law review, volume 113, pp. 640-641 հասանելի է՝ <http://abdet.com.br/site/wp-content/uploads/2014/11/The-New-Separation-of-Powers.pdf>

<sup>39</sup> Տե՛ս Levinson, Daryl J. and Pildes, Richard H., նշված աշխատություն, հղում 22. էջ 62



**ԱՐԱՄ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ**

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական,  
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի «Քրեական իրավունքի  
և քրեական դատավարության իրավունքի» ամբիոնի դասախոս, ի.գ.թ.

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ**

Տվյալ հոդվածի շրջանակներում հեղինակը, հաշվի առնելով մի շարք իրավագետների դիրքորոշումները, ներակայացրել է սահմանադրականության հասկացության և կարևորության վերաբերյալ իր մոտեցումը, միաժամանակ առանձնացնելով սահմանադրականության կապը կառավարման համակարգի հետ: Հեղինակը նշյալ պնդման լույսի ներքո ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում սահմանադրականության և կառավարման համակարգի զարգացումները, հատկապես հաշվի առնելով 2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումները: Ներկայացվում են նաև պետական իշխանության ճյուղերի միջև զսպումների և հակակշիռների ապահովման հետ կապված հիմնահարցերը և դրանց վերաբերյալ սահմանադրական զարգացումները:

**Բանալի բառեր.** սահմանադրականություն, Սահմանադրության գերակայություն, կառավարման համակարգ, սահմանադրական բարեփոխումներ, խորհրդարանական կառավարման համակարգ, զսպումների և հակակշիռների համակարգ

**АРАМ ВАРДЕВАНЯН**

Советник председателя Конституционного суда РА,  
Преподаватель кафедры Уголовного права и уголовно-процессуального права Российско-армянского (Славянского) университета,  
кандидат юридических наук

**СВЯЗЬ КОНСТИТУЦИОНАЛИЗМА С ФОРМОЙ ПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВА**

В рамках данной научной статьи представлены мнения ряда авторов, относительно понятия и значения конституционализма, после обобщения которых авторы представляют свою позицию, и подчеркивают связь между конституционализмом и формой правления. В этом контексте Автор представляет развитие конституционализма и форм правления в Республике Армения, в частности принимая во внимание конституционные реформы, которые состоялись 6 декабря 2015 года. Представляются также важнейшие вопросы и конституционные процессы относительно обеспечения системы сдерживания и противовесов государственной власти.

**Ключевые слова:** конституционализм, верховенство Конституции, форма правления, конституционные реформы, система сдержек и противовесов

**ARAM VARDEVANYAN**

Adviser to the President of the Constitutional Court of RA,  
Lecturer at the Department of Criminal Law and Criminal  
Procedural Law at the Russian-Armenian (Slavonic) University, Ph.D

**THE CONNECTION OF CONSTITUTIONALISM WITH THE FORM OF GOVERNANCE OF STATE**

The article presents the definition and importance of constitutionalism provided by numerous legal scholars and after summarizing them, the Author introduces his own position regarding it and highlights the link between constitutionalism and form of governance. Within the stated context the Author presents the developments of constitutionalism and form of governance in the Republic of Armenia, especially taking into account the constitutional reforms of December 6, 2015. The critical issues and constitutional developments regarding checks and balances of state power are also presented.

**Keywords:** constitutionalism, supremacy of the Constitution, form of governance, constitutional reforms, parliamentary form of governance, system of checks and balances

**ՊԵՏՐՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության դատախազ, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՈՒՂՈՒՄԸ ՊԱՏԺ ԵՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Սույն հոդվածում հեղինակն ուսումնասիրել է դատապարտյալի ուղղման դերն ու նշանակությունը պատժի նպատակների համակարգում: Հեղինակը հանգամանորեն բացահայտել է դատապարտյալի ուղղման նպատակը քրեաիրավական և քրեակատարողական իրավունքի տեսանկյունից: Առանձնակի ուշադրություն է հրավիրել ուղղման նպատակի՝ քրեակատարողական օրենքով ամրագրված հասկացությանը, ինչպես նաև այդ առումով առաջարկել է իր մոտեցումները հասկացության մեջ առկա խնդիրների վերացման հարցում: Հեղինակը քննարկել է նաև «իրավաբանական» ուղղման և «վերադաստիարակման» հարաբերակցության հարցերը և վեջինիս տեսական և հնարավոր գործնական հիմնախնդիրները: Արդյունքում հեղինակի կողմից առաջարկվել է դատապարտյալի ուղղման երկու ձև, որոնցից յուրաքանչյուրն ուղղված է սոցիալական տարբեր երաշխիքների ապահովմանը:

Բացի այդ, հեղինակն անդրադարձել է նաև դատապարտյալի ուղղման՝ որպես պատժի նպատակի իրականացման համար առկա տեսական և գործնական հիմնախնդիրների ուսումնասիրությանը՝ միաժամանակ առաջարկելով դրանց հիմնավորված լուծումները:

Հեղինակը վերլուծության է ենթարկել դատապարտյալի ուղղման քրեակատարողական օրենսգրքով նախատեսված միջոցները և դրանց իրականացման համար օրենսդրական առանձին ակտերում առկա միջոցների կիրարկման կարգը:

**Բանալի բաներ.** քրեական պատիժ, պատժի նպատակներ, դատապարտյալի ուղղում, ուղղման միջոցներ, իրավաբանական ուղղում, դատապարտյալի վերադաստիարակում, նոր հանցագործությունների կանխում

**ПЕТРОС МАРТИРОСЯН**

Прокурор управления расследования по особо важным делам Генеральной Прокуратуры РА, соискатель кафедры Уголовного права и уголовно-процессуального права Российско-Армянского (Славянского) университета

**ИСПРАВЛЕНИЕ ОСУЖДЕННОГО В СИСТЕМЕ ЦЕЛЕЙ НАКАЗАНИЯ**

Автор статьи исследовал роль и значение исправления осужденных в системе целей наказания. Автор подробно раскрывает цель исправления осужденных с точки зрения уголовного и уголовно-процессуального права. Особое внимание он обращает на понятие “цель исправления”, которое закреплено уголовно-процессуальным правом, а также предлагает свой подход к устранению существующих проблем в данном понятии. Автор обсудил вопросы соотношения “правового исправления” и “перевоспитания” и возможные теоретические и практические проблемы последнего. В результате автором предложены два пути реабилитации осужденных, каждый из которых направлен на обеспечение социальных гарантий.

Кроме того, автор обратился к исследованию теоретических и практических проблем осуществления исправления осужденных, в то же время предлагая их обоснованные решения.

Автор статьи проанализировал меры исправления осужденных, предусмотренные уголовно-процессуальным кодексом, и порядок их реализации, который закреплен в отдельных законодательных актах.

**Ключевые слова:** уголовное наказание, цели наказания, исправление осужденного, меры исправления, правовое исправление, перевоспитание осужденного, предотвращение новых преступлений

**PETROS MARTIROSYAN**

Prosecutor at the Department of Investigation for Particularly Important Cases of the General Prosecutor's Office of RA,  
Post-graduate Student at the Department of Criminal Law and Criminal Procedure Law of Russian-Armenian (Slavonic) University

**CORRECTION OF CONVICT IN THE SYSTEM OF THE GOALS OF PUNISHMENT**

The author has studied the role and meaning of correction of convict in the system of the goals of punishment. He has thoroughly revealed the purpose of correction of convict from the criminal legal standpoint and under penitentiary law. He has paid particular attention to the notion "purpose of correction" under penitentiary law. The author has proposed his own approach concerning the elimination of the existing problems of the notion. He also discusses the issues on the correlation between the "legal" correction and "rehabilitation", and theoretical and possible practical problems of the latter. As a result the author suggests two ways of correction of convict, each of which targets ensuring different social guarantees.

Besides, the author refers to the study of theoretical and practical problems on the implementation of punishment for the purpose of correction of convict, and proposes reasonable solutions.

The author analyzes the measures of correction and rehabilitation envisaged by the Penitentiary Code and the order of implementation of those provided by separate legislative acts.

**Keywords:** criminal punishment; purposes of punishment; correction of convict; measures of correction; legal correction; rehabilitation of convict; prevention of new crimes

\* \* \*

**ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ**

«Ն ոստիկանության փորձաքրեագիտական վարչության բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, իրավագիտության թեկնածու

**ԲՆԱԿԱՐԱՆ, ՊԱՇՏՍԱՐԱՆ ԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԱՊՕՐԻՆԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հափշտակությունը որակյալ դարձնող նշված հատկանիշները նախատեսված են միայն գողության, կողոպուտի և ավազակության հանցակազմերում: Նշված հոդվածներում մուտք գործելը, չի համարվում որպես ինքնանպատակ գործողություն, այլ դիտվում է որպես՝ պահպանվող գույքին հասանելի լինելու միջոց: Այդ իսկ պատճառով՝ բնակարան, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելը միշտ զուգորդված է լինում ուրիշ գույքը հափշտակելու դիտավորությամբ: Հեղինակը սույն հոդվածում առաջարկում է «Քրեական դատավարության օրենսգրքում սահմանել ոչ միայն «պահեստարան» և «շինություն» հասկացությունների օրենսդրական բնորոշումները, այլև որոշակի խմբագրման ենթարկել «բնակարան» հասկացությունը: Հեղինակը, որոշակի կարևորություն տալով «տեխնիկական միջոցների գործադրմամբ» իրականացվող հափշտակություններին, համարում է, որ այդպիսի միջոցների գործադրմամբ կատարվող հափշտակություններն ունեն ավելի մեծ հանրային վտանգավորություն և օրենսդրական առումով՝ պետք է ստանան իրենց համարժեք քրեաիրավական գնահատականը:

**Բանալի բառեր.** բնակարան, պահեստարան, շինություն, ապօրինի մուտք գործել, տեխնիկական միջոցների գործադրում, հափշտակություն

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

**ԱՐԱԿ ԱՏԼԱՆՅԱՆ**

Заместитель начальника отдела Экспертно-криминалистического  
управления полиции РА, подполковник полиции,  
кандидат юридических наук

**НЕКОТОРЫЕ УГОЛОВНО-ПРАВОВЫЕ ОСОБЕННОСТИ ОПРЕДЕЛЕНИЯ  
ХИЩЕНИЙ, СОВЕРШЕННЫХ С НЕЗАКОННЫМ ПРОНИКНОВЕНИЕМ В ЖИЛИЩЕ,  
ХРАНИЛИЩЕ ИЛИ ПОМЕЩЕНИЕ**

Указанные особенности, определяющие хищения, предусмотрены только в составе преступления с кражей, грабежом и разбоем. В указанных статьях вторжение не является самоцелью действия, а рассматривается как средство доступа к охраняемому имуществу. По этой причине, незаконное проникновение в жилище, хранилище или помещение всегда сочетается с намерением хищения чужого имущества. В настоящей статье автор предлагает установить в уголовно-процессуальном кодексе РА не только законодательное закрепление понятий “хранилище” и “помещение”, но и редактировать понятие “жилище”. Автор дает определенную важность хищениям, осуществляемым “с применением технических средств”, считает, что хищения, совершенные с применением этих средств имеют большую общественную опасность и в смысле законодательства должны получить соответствующую уголовно-правовую оценку.

**Ключевые слова:** жилище, хранилище, помещение, незаконное проникновение, применение технических средств, хищение

**ԱՐԱԿԻԿ ԱՏԼԱՆՅԱՆ**

Deputy Head of the Department of Criminal Expertise  
Administration of the Police of the Republic of Armenia,  
Lieutenant-colonel of Police, PhD

**SOME PECULIARITIES OF CRIMINAL-LEGAL QUALIFICATION OF STEALING COMMITTED  
THROUGH ILLEGAL ENTRY TO APPARTMENT, WAREHOUSE OR BUILDING**

The mentioned signs qualifying stealing are provided only in the elements of crimes of theft, robbery, and banditry. In the stated articles entry is not an aimless action, but is considered as a means of access to the protected property. That is why illegal entry to an apartment, warehouse or building is always associated with an intention to steal other’s property. In this article the author suggests stating not only legal definitions of the terms “warehouse” and “building”, but also editing the notion of “apartment” in the Criminal Procedure Code of the Republic of Armenia. By highlighting the importance of stealing through “technical facilities”, the author considers that stealing through such facilities is more dangerous for public and should have its equal criminal qualification under the laws.

**Keywords:** apartment; warehouse: building; illegal; to enter; appliance of technical facilities; stealing

**ЛУСИНЕ ВАРДАНИЯН**

Старший следователь по особо важным делам Следственного комитета Республики Армения, кандидат юридических наук

**ЭВТАНАЗИЯ КАК ПРАВОВАЯ КАТЕГОРИЯ**

В статье рассматриваются понятие эвтаназии и ее формы, отмечается актуальность решения проблем, связанных с применением норм об эвтаназии, дается авторское определение эвтаназии, а равно выявляется необходимость законодательных изменений в указанной области.

**Ключевые слова:** эвтаназия, мораль, убийство, право на смерть, биоэтика

**ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ ավագ քննիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու

**ԷՎԹԱՆԱԶԻԱՆ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱ**

Հոդվածում ուսումնասիրվում են էվթանազիայի հասկացությունը և ձևերը, նշվում է դրա կիրառման հետ կապված հիմնախնդիրների լուծման արդիականության մասին, տրվում է էվթանազիայի հեղինակային սահմանումը, ինչպես նաև նշվում է օրենսդրական փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը:

**Բանալի բառեր.** էվթանազիա, բարոյախոսություն, սպանություն, մահվան իրավունք, բիոէթիկա

**LUSINE VARDANIAN**

Senior Investigator for Particularly Important Cases of the Investigative Committee of the Republic of Armenia, PhD

**EUTHANASIA AS A LEGAL CATEGORY**

The article explores the notion and forms of euthanasia, it also notes the modernity of the solutions for the problems on its application, the author’s own definition of euthanasia is provided, as well as it indicates the need for legislative amendments.

**Keywords:** euthanasia; morality; murder; right to die; bioethics

\* \* \*

**ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրանտ

**ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ «ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՄ ԿԱՇԱՌՔ ՏԱԼՈՒ ՆՄԱՆԱԿՈՒՄ» ՕՊԵՐԱՏԻՎ ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

21-րդ դարի սկզբին կոռուպցիան լայն ծավալ ստացավ և դարձավ համաշխարհային հիմնախնդիր: Ավանդաբար կոռուպցիոն առավել բարձր հանրային վտանգավորություն ունեցող հանցագործությունները, որոնց ամբողջությունը կոչվում է կաշառակերություն, կաշառք ստանալը և կաշառք տալն են, որոնցից ածանցվում է նաև կաշառքի միջնորդությունը: Իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ արդի ժամանակաշրջանում կաշառակերության բացահայտման լավագույն եղանակը օպերատիվ-հետախուզական միջոցառումն է, այն է՝ կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում իրականացնելը:

Սույն օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքների հիման վրա ստացված տվյալների ապացուցողական նշանակությունը կարևորվում է նրանով, որ այն տրամադրում է անհերքելի տեղեկատվություն հանցագործության կատարման վերաբերյալ: Ուստի հաշվի առնելով նշված հանգամանքը՝ անհրաժեշտ ենք համարում բազմակողմանի ուսումնասիրել քննարկվող ՕՀՄ-ի կատարման իրավաչափության պայմանները և վեր հանել օրենսդրության մեջ առկա բացթողումները՝ առաջարկելով դրանց համարժեք լուծումներ:

**Բանալի բառեր.** կոռուպցիա, կաշառակերություն, կաշառք, կաշառք ստանալ, կաշառք տալ, կաշառքի միջնորդություն, նմանակում, օպերատիվ-հետախուզական միջոցառում

**ТИГРАН КАЗАРЯН**

Магистрант юридического факультета ЕГУ

### НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ЗАКОННОСТИ ОСУЩЕСТВЛЕНИЯ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОГО МЕРОПРИЯТИЯ “ИМИТАЦИЯ ПОЛУЧЕНИЯ ИЛИ ДАЧИ ВЗЯТКИ”

С начала 21-го века коррупция стала глобальной и широкомасштабной проблемой. Традиционно, коррупционные преступления, которые имеют наивысшую степень общественной опасности, называют коррупцией т.е. получение или дача взятки, от которых посредничество во взяточничестве является производным.

Исходя из анализа юридической практики, становится очевидным, что в сложившейся ситуации лучшим способом раскрытия взяточничества является оперативно-розысканная деятельность, то есть проведение имитации получения или дачи взятки.

Доказательственная ценность данных, полученных в результате осуществления данного оперативно-розыскного мероприятия, является важной по той причине, что последняя обеспечивает неопровержимую информацию о совершенном преступлении.

Поэтому, учитывая эти обстоятельства, мы считаем необходимым тщательно изучить оперативно-розысканную деятельность и раскрыть существующие законодательные проблемы и предложить пути их разрешения.

**Ключевые слова:** коррупция, взяточничество, подкуп, получение взятки, дача взятки, посредничество взятки, имитация, оперативно-розысканная деятельность

**TIGRAN GHAZARYAN**

Graduate Student at LLM program  
of Yerevan State University

### SOME PROBLEMS ON LAWFULNESS OF “IMITATION OF OBTAINING OR GIVING BRIBES” AS OPERATIVE-INVESTIGATORY ACTIVITY

Corruption has become a global problem and has broad scope since the early 21<sup>st</sup> century. Traditionally, corruption crimes that have the highest degree of public danger are called receiving or giving bribes, from which the mediation in bribery is derived.

From the research on legal practices it is evident that the best method of revealing bribery is the operative-investigatory activity – imitation of receiving or giving bribery.

Data received as a result of this operative measure is important because it provides irrefutable information about the committed crime. Therefore, taking into account these circumstances, we consider it necessary to make thorough examination of the operational-investigatory activity and uncover the existing gap in the legislation to offer solutions to them.

**Keywords:** corruption; bribery; graft; receipt of bribe; giving bribery; mediation in bribery; simulation; operational-investigatory activity

**ԿԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի օգնական

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդվածում քննարկվում են ֆիզիկական անձանց սնանկության առանձնահատկությունները, սնանկության իրավական կարգավորման համակարգերի, անվճարունակություն և սնանկություն հասկացությունների տարբերությունները, ինչպես նաև սնանկության կանխարգելման համար նշանակություն ունեցող ֆինանսական առողջացման ընթացակարգի կիրառությունը:

**Բանալի բառեր.** սնանկություն, անվճարունակություն, ֆիզիկական անձ, գույքային պատասխանատվություն, սանացիա

**КАРИНЕ ПЕТРОСЯН**

Помощник заместителя генерального прокурора РА

**ОСОБЕННОСТИ БАНКРОТСТВА ФИЗИЧЕСКИХ ЛИЦ**

В статье обсуждается банкротство физических лиц, система правового урегулирования банкротства, понятие о различии неплатежеспособности и банкротства, а также о финансовом оздоровлении и о применении систем, предотвращающих банкротство.

**Ключевые слова:** банкротство, неплатежеспособность, физическое лицо, финансовая ответственность, санация

**KARINE PETROSYAN**

Assistant to the Deputy Prosecutor General of RA

**FEATURES OF BANKRUPTCY OF NATURAL PERSONS**

The article discusses the features of bankruptcy of natural persons, legal schemes of bankruptcy, the difference between the notions “inability to make payments” and “bankruptcy”, as well as it explores the application of procedure to rescue the finance which plays preventive role for bankruptcy.

**Keywords:** bankruptcy; inability to make payments; natural person; property liability; sanction

\* \* \*

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 93 2016

**ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ, ՀՀ արդարադատության նախարարության կազմակերպական-իրավական վարչության առաջին կարգի մասնագետ.

**ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄԱՆ ՍԿՁԲՈՒՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ**

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրվել են իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի վերաբերյալ ձևավորված ժամանակակից ընկալումները: Ուսումնասիրվել են իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի կապը «իրավական պետություն» հասկացության հետ, ինչպես նաև իշխանությունների բաժանման սկզբունքի և միասնական պետական իշխանության փոխհարաբերության հարցը: Հոդվածի շրջանակներում համակողմանի հետազոտության է ենթարկվել նաև իշխանությունների բաժանման սկզբունքի՝ որպես իրավական, և որպես քաղաքական սկզբունքի փոխհարաբերակցության հիմնախնդիրը, ինչպես նաև իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքի կառուցակարգային զարգացման ժամանակակից միտումները:

**Բանալի բաներ.** իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, իրավական պետություն, միասնական պետական իշխանություն, քաղաքական կուսակցություններ, «անկախ» պետական մարմիններ

**АЙК КЕСОЯН**

Аспирант Академии государственного управления Республики Армения,  
 Специалист первого класса организационно-правового управления  
 Министерства юстиции РА

**СОВРЕМЕННЫЕ ВОСПРИЯТИЯ ПРИНЦИПОВ  
 РАЗДЕЛЕНИЯ И УРАВНОВЕШИВАНИЯ ВЛАСТЕЙ**

В рамках статьи предметом исследования послужили современные восприятия, сформированные относительно принципа разделения и уравнивания властей. Изучены связь принципа разделения и уравнивания властей с понятием “правовое государство”, а также вопрос взаимоотношения принципа разделения властей и единой государственной власти. В рамках статьи всестороннему исследованию была также подвергнута проблема принципа разделения власти, как правового и как политического принципа, а также современные тенденции структурного развития принципа разделения и уравнивания властей.

**Ключевые слова:** принцип разделения и уравнивания властей, правовое государство, единая государственная власть, политические партии, “независимые” государственные органы

**HAYK KESOYAN**

First-Class Specialist at the Department of Legal-Organization  
 at the Staff of the Ministry of Justice  
 of the Republic of Armenia,  
 PhD student of Public Administration Academy  
 of the Republic of Armenia

**MODERN PERCEPTIONS ON THE PRINCIPLE OF SEPARATION AND BALANCE OF POWERS**

Within the scope of this article the modern perceptions on the principle of separation and balance of powers are studied. The relationship between the principle of separation and balance of powers and the concept of “rule of law” is examined. Also the question of the relationship between the principle of separation of powers and the uniform government is discussed. As a part of comprehensive study the article also refers to the problem of the principle of separation of powers as a legal and a political principle, as well as to the current trends in the structural development of the principle of separation and balance of powers.

**Keywords:** the principle of separation and balance of powers; rule of law; unified state power; political parties; the “independent” state bodies



**ՀՀ ՂԱՏԱՆԱԶՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՂԱՀԱՆՁՆԵՐԸ**

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է կրեն գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջներին բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանց չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել [orinakanutyun@prosecutor.am](mailto:orinakanutyun@prosecutor.am) հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջերի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել՝ ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ միասին պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերվող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերվող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի այն տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4/201x297 մմ/ չափի և ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30մմ, աջից՝ 10մմ, վերևից՝ 20մմ, ներքևից՝ 25մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրել 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվի ինտերնետային հասցեն, և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցվածը թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

**Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և հնարավոր է չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար:**